Azg
armenian daily
2 ՆՈՅԵՄԲԵՐ 1995. ՇԱԲԱԹ # 211 (965)

Բոսնիայի հարց. Դժվար թե բանակցող կողմերը Օհայոյում համաձայնության գան

Երեկ ԱՄՆ Օհայո նահանգի ռազմաօդային ուժերի տեղակայանում հանդիպեցին Սերբիայի, Խորվաթիայի եւ Բոսնիայի ղեկավարները: Հանդիպումը տեղի է ունենում փակ դռների հետեւում, լրագրողները տեղեկություններ կարող են ստանալ միայն ԱՄՆ պետքարտուղարի մամլո ծառայությունից: Հանդիպումից առաջ հայտնի դարձավ, որ Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը դժգոհություն է հայտնել Ռուսաստանի դերը բոսնիական բանակցություններում թերագնահատելուց: Այս բանակցություններում անմիջական միջնորդներ՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Իգոր Իվանովը, ԱՄՆ պետքարտուղարի օգնական Ռիչարդ Հոլբրուկը եւ եվրամիության ներկայացուցիչ Կարել Բիլտը լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտնեցին, որ դրանք կլինեն չափազանց դժվար, եւ նի որ բանակցություններն սկսելուց առաջ էլ հակամարտ կողմերի միջեւ տարաձայնությունները վերջանականորեն լուծված չէին: Դրանք այնքան խորն են, որ, Հոլբրուկի կարծիքով, դժվար թե բանակցող կողմերն ընդհանուր համաձայնության գան: Այդ մասին է վկայում բոսնիական մահմեդականների ղեկավար Ալիա Իզեթբեգովիչի բանակցություններից առաջ արած այն հայտարարությունը, որի համաձայն նա ԱՄՆ-ում կայանալիք բանակցություններում պնդելու է միասնական Բոսնիայի գաղափարը, որին կտրականապես դեմ են սերբական ու խորվաթական կողմերը:

ԵՐԵՎԱՆ

Վարշամեսի հավաստմամբ՝ զորակոչը կկատարվի 100 տոկոսով

Այս համոզմունքը հայտնեց ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանը, հանդես գալով աշնանային զորակոչի առաջին արդյունքներին ու դժվարությունների հաղթահարման հարցերին նվիրված հանդիսավորական խորհրդակցությունում: Վարչապետի պնդմամբ, կառավարությունը կանի նյութատեխնիկական եւ այլ բնույթի դժվարությունները հարթելու բոլոր անհրաժեշտ քայլերը: ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը հանձնարարականներ տվեց զինկոմներին, տեղական իշխանություններին առաջարկեց ա ջակցել աշնանային զորակոչին: Պաշտպանության նախարարության կազմակերպազորահավաքային վարչության պետ գեներալ մայոր Արթուր Հարությունյանը ներկայացրեց զորակոչի նախնական պատկերն ըստ հանրապետության քաղաքների ու շրջանների: Խորհրդակցությունում ճշգրտվեցին եւ հաստատվեցին զորակոչի տարածաշրջանային հանձնաժողովների կոորդինատորների բեկնածությունները:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԼՂՀ նախագահն ընդունեց Մինսկի խմբում Գերմանիայի ներկայացուցչին

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 1 ՆՈՅԵՄԲԵՐ, ՍՆԼՐԲ: Այսօր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանն ընդունեց Ստեփանակերտ ժամանած ԵԱՀԿ Մինսկի խմբում Գերմանիայի ներկայացուցիչ Ֆրանկ Լամբախին: Ինչպես Սնարք գործակալությունը հայտնեց ԼՂՀ նախագահի մամլո քարտուղար Ալեքսանդր Գրիգորյանը, տեղի ունեցավ կարծիքների փոխանակում ղարաբաղյան կարգավորման ուղիների շուրջ: Պարոն Լամբախը, մասնավորապես, շարադրեց իր տեսակետը Լեռնային Ղարաբաղին անվտանգության միջազգային երաշխիքներ տալու եւ նրա կարգավիճակի առնչությամբ: Ընդսմին, նա նշեց տարածաշրջանում կրակի դադարեցման ընթացակարգը հետագայում պահպանելու միջոցառումների կարեւորությունը: Գերմանիայի ներկայացուցիչն ընդգծեց, որ միայն կայունության պայմաններում է հնարավոր վարել կառուցողական բանակցություններ: ■

ԼՂՀ իշխանությունները ազատեցին եւս 5 ադրբեջանցի ռազմագերիների

Նոյեմբերի 1-ին ԼՂՀ իշխանությունները հերթական անգամ միակողմանիորեն ադրբեջանական իշխանություններին հանձնեցին ԼՂՀ-ում պահվող եւս 5 ադրբեջանցի ռազմագերիների: Ինչպես տեղեկացրեց ԼՂՀ նախագահի մամլո քարտուղար Ալեքսանդր Գրիգորյանը (որը միաժամանակ Սնարք գործակալության թղթակիցն է, եւ այդ իսկ պատճառով ուշացնում է լուրերի տրամադրումը մյուս թղթակիցներին), բարի կամքի այդ քայլը ղարաբաղյան կարգավորման ուղղված բանակցությունների մոսկովյան փուլի նախօրեին իրականացվել է ի պատասխան հոկտեմբերի 30-ին Ստեփանակերտ ժամանած ԵԱՀԿ Մինսկի խմբում ԱՄՆ ներկայացուցիչ Ջոզեֆ Փրեսելի, ինչպես նաեւ ԼՂՀ-ում Միջազգային կարմիր խաչի կոմիտեի խնդրանքի: Նույն օրը բոլոր գերիները փոխանցվել են ադրբեջանական կողմին: Այսօրվա դրությամբ ԼՂՀ-ն միակողմանիորեն ազատ է արձակել ԼՂՀ-ում պահվող Ադրբեջանի 190 քաղաքացիներին:

Վ. Ա.

ՀԱԷԿ. Թույլատրվեց 2-րդ էներգաբլոկի նախագծային հզորությունը

Պետական հանձնաժողովի եւ «Ռոսատոմէներգո» կոնցեռնի մասնագետների մասնակցությամբ ուսումնասիրությունները պարզեցին, որ վերականգնման աշխատանքները իրականացվել են ճշգրիտ, Արմենպրեսի բաժանորդագրված թղթակիցը հեռախոսով հայտնեց Հայկական ատոմակայանի գլխավոր ինժեներ Գագիկ Մարկոսյանը: Պետական հանձնաժողովը թույլատրեց երկրորդ էներգաբլոկի հզորությունը հասցնել նախագծային: *ԱՐՄԵՆՊՐԵՍ*

«ԴՐՈ» ԴԱՏ

Գեղամ Մանուկյանը փորձելու է հերքել ՀՅԴ-ին վերագրվող մեղադրանքը

Հովհաննես Մկրտչյանը չի շտապում ասել ճշմարտությունը

ՍԱՍՍ ՊԵՏԵՐՍԲՈՒՐԳ, ... Հավատարիմ մնալով 1995 թ. սեպտեմբերի 4-ի իր հայտարարությանը, «Դրո» գործով ամբաստանյալներից Հովհաննես Մկրտչյանը երեկ ոչ մի հարցի չպատասխանեց, պնդելով, որ առայժմ դատավարությանը չի մասնակցում: Նախագահողը հրաժարակեց նրա նախաքննական ցուցմունքները, առաջին հերթին վերաբերվող Մոսկվայի քննչական մարմինների կողմից, իսկ մարտի 2-ից սկսած արդեն Երեւանում: Մոսկվայում կատարված առաջին երկու հարցաքննությունները, որոնցով բացատրություն է պահանջվել բանտարկյալ դարձած Մանուկյանի ... մասին, նրա պատասխանատու աշխատակիցներ ... որոնք ... Մոսկվայի Հայաստանի ... խախտումներով ... դեմ էր իրեն առաջադրված եւ դեմ էր իրեն առաջադրված դրանց հետագոտմանը: Իր տեսակետը փաստաբանը հիմնավորեց նրանով, որ նախ ամբաստանյալը հայտնել է, թե իր ոտքերենի իմացությունն անբավարար է, բացի այդ, հարցաքննվել է առանց պատշաճի ներկայության: Պետական մեղադրողն, իմարկե, համամիտ չէր փաստաբանի կարծիքին:

Հարցաքննությունների ժամանակ Հ. Մկրտչյանը հայտնել է, որ անհեղեղյան է ճամպրակում եղած թռանյութի գոյության մասին, իսկ նարդին հյուրանոցից անհետացել էր մինչեւ իրեն ձերբակալելը: Ճամպրակի ու նարդու Մոսկվա տեղափոխման մասին, որը համաձեռ իրականացրել են Արա Հարությունյանն ու Հովհաննես Մկրտչյանը, միմյանցից տարբեր ցուցմունքներ են տվել:

Տես # էջ 2

ՖՐԱՆՍԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

Պատվիրակներ դեսպանության նոր շենքի բացման առիթով

Պատվիրակությունը գլխավորում է նախարար Միշել Բառնիեն

ՏԻԳՐԱՆ ԼԻՊԱՐԻՏ

Նոյեմբերի 3-ի լույս գիշերը հատուկ ինքնաթիռով Փարիզից Երեւան կժամանի Ֆրանսիայի պատշաճական պատվիրակությունը եվրոպական գործերով պետքարտուղար նախարար Միշել Բառնիեի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում են Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատի Ազգային ժողովի պատգամավոր, Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի ղեկավար Ֆրանսուա Ռոբերտան, Ֆրանսիայի ԱԳՆ կոնտինենտալ Եվրոպայի դեպարտամենտի տնօրեն Փոլ Փուդադը, ԱԳՆ ծածկագրային կապի, ինֆորմատիկայի եւ հաղորդակցությունների ծառայության տնօրեն Ժան-Պոլ Վեզիանը, եվրոպական գործերով նախարարության եւ ֆինանսների նախարարության պատասխանատու աշխատակիցներ: Պատվիրակությանը ընկերակցելու են TV 5 հեռուստաընկերության նախագահ Պատրիկ Իմհոսը, այդ նույն հեռուստաընկերության ու միջազգային ֆրանսիական (RF-1) ռադիոյի թղթակիցներ:

Պատվիրակությունը Երեւան է ժամանում Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության նոր շենքի բացման հանդիսավոր արարողություններ մասնակցելու համար. մեզ հայտնեցին դեսպանության մամուլի ծառայությունից:

Տես # էջ 2

ԱՄՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

Բիլ Քլինթոնի խորհրդական Ջեյմս Քոլինզը Երեւանում

Այսօր Երեւան է ժամանում ԱՄՆ պատշաճական պատվիրակությունը նախագահ Բիլ Քլինթոնի ավագ խորհրդական Ջեյմս Քոլինզի գլխավորությամբ: Պատվիրակության անդամներին առաջիկա կընդունի ՀՀ նախագահի գլխավոր խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը, այնուհետեւ նրանք կհանդիպեն Թի նանսների նախարար Լեւոն Բարխուդարյանի, ԱԳՆ, եվրամիության եւ միջազգային տնտեսական կազմակերպությունների գծով նախարար Գագիկ Շահբազյանի, ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Բագրատ Ասատրյանի, պատշաճության նախարար Վազգեն Սարգսյանի, փոխարգործնախարար Էդուարդ Զուլոյանի հետ: Պատվիրակության անդամները կհանդիպեն նաեւ Հայաստանի ընդդիմադիր կուսակցությունների ղեկավարների հետ: Օրվա երկրորդ կեսին Ջեյմս Քոլինզի գլխավորած պատվիրակությանը կընդունեն ՀՀ նախագահն ու վարչապետը: Ինչպես նախապես հայտնել ենք, հանդիպումների ընթացքում կքննարկվեն Հայաստանին տրվող տնտեսական օգնության, երկու երկրների համագործակցության, զարգացման խնդրին վերաբերող հարցեր: Ժամը 17-ին ընդունելությունների տանը տեղի կունենա պատվիրակության անդամների ասուլիսը:

ՔՎԵԲԵԿ

Վարշամեսն Ժակ Պարիզոն հրաժարական տվեց

ՍՈՒԼԵԱԼ, 1 ՆՈՅԵՄԲԵՐ, WSJ: Կանադայի մնացյալ մասից անջատվելու հանրաքվեն կորցնելուց հետո Քվեբեկի նահանգի վարչապետ Ժակ Պարիզոն հրաժարական տվեց, միաժամանակ ցավ հայտնելով, որ 50,6 տոկոսի դիմաց 49,4 տոկոսի արդյունքով իր եւ կողմնակիցների պատրաստության համար նախորդ օրը մեղադրել էր ոչ ֆրանսիացի ներգաղթողներին: Իր հերթին, Կանադայի վարչապետ Ժան Կրեթիենը հայտարարեց, թե ինքը մյուս նահանգների ղեկավարների հետ համոզչական աշխատանք է տանելու երկրում կառավարության առանձնացումը խաթարելու եւ Քվեբեկի նահանգին առանձնահատուկ համայնքի կարգավիճակ տալու համար: Մյուս կողմից, կանադական ֆինանսական շուկաներում հանրաքվեի արդյունքները երկիրը հեռու պահեցին տնտեսական տագնապից, ուժեղացավ կանադական դոլարը եւ բանկերը մեղմացրին իրանց տոկոսադրույքները: Իրենց հերթին, Կանադայում ներդրումներ ունեցող օտարերկրյա շրջանակները զգոնություն հայտնեցին հանրաքվեի արդյունքի համար, սակայն ոմանք մտավախություն հայտնեցին, որ երկրում քաղաքական անորոշությունը կարող է շարունակվել:

ԲԱՔՈՒ

Ռուս մասնագետները ենթադրում են, որ տեղի է ունեցել ահաբեկչություն

Հոկտեմբերի 28-ին Բաքվի մետրոյի շարժակազմում ծագած հրդեհի, որը պատճառ դարձավ 300-ից ավելի մարդկային զոհերի, որոնցից մոտ տասնիսկական անաստության հետեւանքի: Սակայն Բաքու հրավիրված Միսիշինի վագոնաշինական գործարանի մասնագետները տեղում վագոններ մանրակրկիտ զննելուց հետո բացառեցին նախօրոք տարածված այն լուրը, որի համաձայն հրդեհի պատճառը եղել է ուժային շարժիչի անսարքությունը: Վերոհիշյալ գործարանի գլխավոր ինժեներ Ալեքսանդր Կազենցեւը հայտարարեց, որ շարժիչում էլեկտրական կարճ միացում չի եղել եւ հետեւաբար հրդեհ առաջանալ չէր կարող: Ռուս մասնագետները երկիմաստ ձեւով հայտարարեցին, որ այս ամենը կարող էր սահմանչական գործողության հետեւանք լինել: ■

Մուսավաթն ու կոմկուսը չեն մասնակցի ընտրություններին

ԲԱՔՈՒ, 31 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՈՒՆԻՏՈՐ: Ադրբեջանի Գերագույն դատարանը հայտնեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը Մուսավաթ եւ կոմունիստական կուսակցություններին չգրանցելու մասին: ԿԸՀ-ն գտել էր, որ Մուսավաթ կուսակցության հավաքած ստորագրությունների առնվազն 10 տոկոսը կեղծ է: Գերագույն դատարանը հաստատել է նաեւ անհատական կարգով ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած կոմունիստների գրանցման մերժումը, որը արվել էր տարբեր պատճառաբանություններով: Այսպիսով, նոյեմբերի 12-ի ընտրություններին մասնակցելու համար գրանցված կուսակցությունների թիվը 9 է, որոնց թվում նախագահ Այազի «Յենի Ազրբայջան» կուսակցությունն ու ընդդիմադիր գլխավոր կազմակերպությունը Ժողովակատը: Մուսավաթ կուսակցությունը դավանում է սոցիալ դեմոկրատիան, մինչդեռ կոմունիստները ցանգվում են Խ. Միության վերականգնումը Ադրբեջանի ընդգրկմամբ: Ընտրություններին չի մասնակցի նաեւ ընդդիմադիր մեծ կուսակցությունների համախմբում «Կլոր սեղան», համապատասխան բանակցությամբ ստորագրությունները չհավաքելու պատճառով: ■

Գրաչով. «Թուրքիան սպառնալիք չէ Ռուսաստանի համար»

Ինչպես գրել էինք երեկ, պատշաճական այցով Հունաստան ժամանած Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովը Աթենքում հայտարարություն էր արել ՆԱՏՕ-ի դեմ ուղղված երկրներ ծավալման դեմ: Երեկ, բարեկամական բերանի տեղեկություններ են հրապարակվել այն մասին, թե Աթենքում Գրաչովը հայտարարել է նաեւ, որ Թուրքիան սպառնալիք չի հանդիսանում Ռուսաստանի համար: Նա ասել է, որ Մոսկվան ցանկանում է լավ հարաբերություններ զարգացնել եւ Աթենքի, եւ Անկարայի հետ: Հունաստանի պաշտպանության նախարար Գեորգիոս Արսենիսի հետ հանդիպման ժամանակ Գրաչովը, սիրտ հարմանալի բարեկամական մթնոլորտում, հայտարարել է, թե տեսակետ չկա Բալկանյան «խոտաղարար» զորավարժությունների 2-րդ փուլին Թուրքիայի մասնակցության վերաբերյալ: ■

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

Հոկտեմբերի 20-ին հրապարակվեց հաղորդագրություն այն մասին, որ ՀՀ նախագահ հրամանագիր է ստորագրել, որով հարկային տեսչությունը «դուրս է բերվում կառավարության կառուցվածքից»:

Այս հրամանագիրը անսովոր է մի շարք առումներով:

ա) Այն ստորագրվեց կառավարության նոր կառուցվածքը և կազմը հաստատելուց միայն երեք ամիս անց: Հուլիսին հաստատված կառավարության կառուցվածքը արդյունք էր մի շարք փոփոխությունների, որոնց ցանկալիության մասին կառավարությունը և վարչապետ Հրանտ Բագրատյանը նախկինում բազմիցս արտահայտվել էին: Երբեք կառավարության կողմից հարց չի բարձրացվել հարկային տեսչության կարգավիճակը փոփոխելու մասին:

բ) Դժվար է հավատալ, թե հարկային տեսչության կառավարության կառուցվածքից դուրս բերելու մասին որոշումը վայելում է կառավարության և անձամբ վարչապետի հավանությունը: Թեկուզ և այն դյուրզ դատողությամբ, որ վարչապետի համար ցանկալի չէր լինի իր վերահսկողությունից դուրս թողնել նման կարևոր կառույց:

գ) Հրամանագրի մասին հաղորդագրությունը չի ճշտում, թե ինչ է նշել է «կառավարության կառուցվածքից դուրս»: Եթե հրամանագիրը չի հրապարակվել, այդ դատողությամբ հայտնի չէ արդյոք այս հարցի հարցերը միշտ հրապարակվել են միայն այն բանից հետո, երբ կառավարությունն արդեն լիովին նախաքննություն էր նշանակ իրագործման համար անհրաժեշտ միջոցառումները: Սա լրացուցիչ կռվան է առ այն, որ հրամանագիրը կառավարության համար եղել է անակնկալ:

դ) Սահմանադրությունը թույլ չի տալիս հարկային տեսչության գործունեությունը նախագահին կից դատարկվեցին բյուջեի կատարման ընթացքի (կրկնում ոչ վաղ ընթացքի) մասին վերաբերյալ տվյալները: Այդ նիստի կեսին ներկա է եղել հանրապետության նախագահը, որում որում, իր եզրակացությամբ նա խստորեն քննադատել է... հարկային տեսչության աշխատանքը (ճիշտ է միայն որոշակի ստորաբաժանումների): Պաշտոնական տեղեկատվությունից այն տպավորությունն է ստեղծվում, որ նախագահը հիշյալ նիստին մասնակցել էր գլխավորապես այդ քննադատական ճառն արտասանելու նպատակով:

Այս բոլորը առիթ են տալիս ենթադրելու, որ մենք վկա ենք նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և վարչապետ Հրանտ Բագրատյանի միջև ծագած տարաձայնության:

Եթե այս ենթադրությունը ճիշտ դուրս գա, արդյոք բերեալ հիմք կա որոշ անհանգստության, քանի որ Տեր-Պետրոսյանի և Բագրատյանի խառնվածքը զինակցությունն անկասկած հանրապետության կայունությունն ապահովող կարևոր գործոններից մեկն է:

Սակայն կա մեկ այլ անհանգստացնող գործոն, ոչ թե ենթադրական, այլ իրական: Դա այն է, որ հանրապետության նախագահն իր ստորագրությունն է դնում բերանակ, հաղորդագրություն ստեղծված փաստաթղթի տակ: Այդպիսին էր նաև Պետարիտրաժին ուղարկված նամակը, որով նա խնդրում էր կասեցնել «Գոլոս Արմենիի» գործով դատավճռի իրագործումը (մինչդեռ, դատավճիռը գոյություն չուներ): Այդպիսին է և խնդրո առարկա հրամանագիրը, որով կարգադրվում է դեռ երեք ամիսը չբոլորած կառավարության կառուցվածքից հանել նրա մի կարևոր բաղադրիչը, բայց չի ասվում, թե ինչ է պետք անել դրա հետ ապագայում:

ՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՂԻՇԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Ի՞նչ է սպասում հարկային տեսչությանը

անց: Հուլիսին հաստատված կառավարության կառուցվածքը արդյունք էր մի շարք փոփոխությունների, որոնց ցանկալիության մասին կառավարությունը և վարչապետ Հրանտ Բագրատյանը նախկինում բազմիցս արտահայտվել էին: Երբեք կառավարության կողմից հարց չի բարձրացվել հարկային տեսչության կարգավիճակը փոփոխելու մասին:

բ) Դժվար է հավատալ, թե հարկային տեսչության կառավարության կառուցվածքից դուրս բերելու մասին որոշումը վայելում է կառավարության և անձամբ վարչապետի հավանությունը: Թեկուզ և այն դյուրզ դատողությամբ, որ վարչապետի համար ցանկալի չէր լինի իր վերահսկողությունից դուրս թողնել նման կարևոր կառույց:

գ) Հրամանագրի մասին հաղորդագրությունը չի ճշտում, թե ինչ է նշել է «կառավարության կառուցվածքից դուրս»: Եթե հրամանագիրը չի հրապարակվել, այդ դատողությամբ հայտնի չէ արդյոք այս հարցի հարցերը միշտ հրապարակվել են միայն այն բանից հետո, երբ կառավարությունն արդեն լիովին նախաքննություն էր նշանակ իրագործման համար անհրաժեշտ միջոցառումները: Սա լրացուցիչ կռվան է առ այն, որ հրամանագիրը կառավարության համար եղել է անակնկալ:

դ) Սահմանադրությունը թույլ չի տալիս հարկային տեսչության գործունեությունը նախագահին կից դատարկվեցին բյուջեի կատարման ընթացքի (կրկնում ոչ վաղ ընթացքի) մասին վերաբերյալ տվյալները: Այդ նիստի կեսին ներկա է եղել հանրապետության նախագահը, որում որում, իր եզրակացությամբ նա խստորեն քննադատել է... հարկային տեսչության աշխատանքը (ճիշտ է միայն որոշակի ստորաբաժանումների): Պաշտոնական տեղեկատվությունից այն տպավորությունն է ստեղծվում, որ նախագահը հիշյալ նիստին մասնակցել էր գլխավորապես այդ քննադատական ճառն արտասանելու նպատակով:

Այս բոլորը առիթ են տալիս ենթադրելու, որ մենք վկա ենք նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և վարչապետ Հրանտ Բագրատյանի միջև ծագած տարաձայնության:

Եթե այս ենթադրությունը ճիշտ դուրս գա, արդյոք բերեալ հիմք կա որոշ անհանգստության, քանի որ Տեր-Պետրոսյանի և Բագրատյանի խառնվածքը զինակցությունն անկասկած հանրապետության կայունությունն ապահովող կարևոր գործոններից մեկն է:

Սակայն կա մեկ այլ անհանգստացնող գործոն, ոչ թե ենթադրական, այլ իրական: Դա այն է, որ հանրապետության նախագահն իր ստորագրությունն է դնում բերանակ, հաղորդագրություն ստեղծված փաստաթղթի տակ: Այդպիսին էր նաև Պետարիտրաժին ուղարկված նամակը, որով նա խնդրում էր կասեցնել «Գոլոս Արմենիի» գործով դատավճռի իրագործումը (մինչդեռ, դատավճիռը գոյություն չուներ): Այդպիսին է և խնդրո առարկա հրամանագիրը, որով կարգադրվում է դեռ երեք ամիսը չբոլորած կառավարության կառուցվածքից հանել նրա մի կարևոր բաղադրիչը, բայց չի ասվում, թե ինչ է պետք անել դրա հետ ապագայում:

ՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՂԻՇԱՐՅԱՆ

ՖՐԱՆՍԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

Պատվիրակներ դեսպանության նոր շենքի բացման առիթով

Պատվիրակությունը գլխավորում է նախարար Միշել Բառնիեն

Սկիզբը էջ 1

Այցը կտեւի ուղիղ մեկուկես օր: Ուրբաթ առավոտյան նախարարն ու իրեն ուղեկցող անձինք կայցելեն դեսպանություն (Գրիգոր Լուսավորչի փողոցում գտնվող դեռասանի նախկին տուն): Հանդիպումներ են նախատեսված Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի, Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանի, արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանի հետ, ինչպես նաեւ այցելություն Մայր աթոռ Ս. Էջմիածին եւ տեսակցություն Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի հետ: Երեկոյան ՀՀ նախագահի, բարձրաստիճան այլ հրավիրյալների մասնակցությամբ տեղի կունենա դեսպանատան բացումը:

Շաբաթ օրը Ֆրանսիայի նախարարը կայցելի Մատենադարան, հանդիպումներ կունենա ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանի, ֆինանսների նախարար Լեւոն Բարխուդարյանի հետ: Կստորագրվեն երկու պայմանագրեր Ֆրանսիայի եւ Հայաստանի միջեւ՝ ներդրումների փոխադարձ պաշտպանության, մշակութային ու գիտատեխնիկական համագործակցության մասին: ԱՊՀ-ի, Եվրամիության ու միջազգային տնտեսական կազմակերպությունների նախարար Գագիկ Շահբազյանը ճաշ կտա իր ֆրանսիական գործընկերոջ պատվին:

Եվրոպական գործերով պատգամավոր նախարար Միշել Բառնյեն 44 տարեկան է, բարձրահասակ՝ 1.88 մ: Միջնակարգ կրթությունը ստացել է հայրենի Ալբերվիլ (Սավոյ դեպարտամենտ) քաղաքում: 1972 թվականին ավարտել է Փարիզի առեւտրի բարձրագույն դպրոցը, այնուհետեւ աշխատել Ֆրանսիայի շրջակա միջավայրի, երիտասարդության գործերի ու սպորտի, առեւտրի ու արհեստների նախարարների աշխատակազմերում: Ֆրանսիայի հայտնի էկոլոգներից է: 1973 թվականից Սավոյ դեպարտամենտի գլխավոր խորհրդի անդամ է, 1982-ին ընտրվել է գլխավոր խորհրդի նախագահ (ամենաերիտասարդը երկրի պատմության մեջ): 1978-93 թթ. ընտրվել է Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավոր «Հանուն Հանրապետության միավորում» գոլիստական կուսակցության կողմից: Եղել է 1992 թ. Ալբերվիլում ու Սավոյում անցկացրած 16-րդ ձմեռային օլիմպիական խաղերի կազմկոմիտեի համանախագահը: 1993-95 թթ. եղել է Ֆրանսիայի շրջակա միջավայրի նախարարը, ս.թ. մայիսի 15-ին նշանակվել է Ֆրանսիայի՝ Եվրոպական գործերով պատգամավոր նախարար: Ամուսնացած է, ունի 3 երեխա: Քաղաքական ու բնապահպանության հարցերին նվիրված մի շարք գործերի հեղինակ է:

ՀԱՄԱՌՈՏ

Սահման. Միջադեպ հյուսիս-արեւելքում

Հայաստանի հյուսիս-արեւելյան սահմանագոտում սահմանային միջադեպ է գրանցվել: Ադրբեջանի զինված ուժերի ստորաբաժանումները հոկտեմբերի 31-ին, ժամը 14.00-ից 10 րոպե տեւողությամբ խոշոր տրամաչափի գնդացիրներով եւ հրաձգային տարատեսակ զենքերով գնդակոծել են Նոյեմբերյանի շրջանի Ոսկեդար գյուղի պաշտպանական դիրքերը: Ինչպես հայտնեցին ՀՀ ՊՆ մամուլի եւ լրատվության վարչությունից, միջադեպի ժամանակ մեկ զինծառայող բեթեւ վիրավորվել է: Հայաստանի զինված ուժերի ստորաբաժանումները պարտադրել են հակառակորդին դադարեցնել կրակը: Սահմանի մյուս հատվածներում երեկ գիշեր եւ այսօր առավոտյան հարաբերական անդորր պահպանվել է: *ԱՐՄԵՆՊՐԵՍ*

Բենզինը իջավ գրեթե նախկին գնին

Հայաստանի բենզաքարշների ալեկոծված «ծովում» մի քանի օր տեւած մանրաթյունը տեղի տվեց: Նոյեմբերի 1-ին մասնավոր լցակայաններում կրկնակի բանկարժեք դարձած հեղուկի գինն իջավ նախկին մակարդակին՝ մոտ 2700 դրամ: *ԱՐՄԵՆՊՐԵՍ*

Հայաստան եկող երկաթուղին կբացվի Աբխազիայի հատվածում

ԵՐԵՎԱՆ, 31 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Ռուսական զանգվածային լրատվության միջոցներն շարունակում են լայնորեն քննարկել երկու իրադարձություններ. ԱՊՀ երկրների ՆԳ նախարարների այցը Երեւան եւ Բաքվում գումարված ԱՊՀ երկրների մինչաբնական գերատեսչությունների ղեկավարների տեխնիկական խորհրդի նիստը: Երկու դեղերում էլ լրագրողներ կարեւորում են այդ հանդիպումներում հայ-ադրբեջանական մերձեցումները:

Միեւնույն ժամանակ, անդրադառնալով Երեւանում ՆԳ նախարարների միջեւ ստորագրված հանցագործությունների դեմ պայքարի մասին համաձայնագրին, մամուլը այդ փաստաթղթը համարում է կոմկոմայան տարածաշրջանի համար խնայայմական: Նախ, դա կարվում է այն փաստի հետ, որ մոտ ժամանակներս կվերականգնվի երկաթուղային երթեւեկությունը Չեչնիայի տարածքով: Իսկ Ռուսաստանի ՆԳՆ տրանսպորտային ոստիկանության վարչության ղեկ Անատոլի Ռոմանովը անակնկալ մատուցեց հայտարարելով, թե «շատ շուտով կվերականգնվի երկաթուղային երթեւեկությունը դեպի Հայաստան ու Վրաստան արխազական հատվածում»:

ՈՒՍԿԵՌԱՐ ԱԶԱՏԱՎԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տալիս
Ինքնուրույն եւ հրատարակչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաղ 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ՍԱՍՎԵԼ ԴԻԼԱՆԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՍՈՒՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ / 562863
A STYLE համակարգչային
ծառայություն / 581841
Ոճը եւ տարածքները ՊԱՏՐԱՍՏԵՑԻՆ
Apple Macintosh
համակարգչային շարվածքը
«Ազգ» թերթի
Յուրաքանչյուր «Ազգին» պարտադիր է
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVE[illegible]IKIAN / phone: 521635
47 Hanrapetoutiun st.,
Yerevan, Armenia, 375010

Գեղամ Մանուկյանը փորձելու է հերքել ՀՅԴ-ին վերագրվող մեղադրանքը

Սկիզբը էջ 1

Ա. Հարմանդայանը դատարանում եւս պնդեց, որ ճամպրուկը Հ. Սկրտչյանն էր վերցրել Նորի բնակարանից, իսկ ինքը մեքենայով նրան օդանավակայան է հասցրել: Հարմանդայանը նույնը պնդել է նաեւ Սկրտչյանի հետ առերեսման ժամանակ, դատարանում եւս չզիջեց դիրքերը: Սինդեռ, Հ. Սկրտչյանը իր նախաքննական ցուցմունքում, նաեւ առերեսման ժամանակ պնդել է, որ ափսեաձեւ փնտրելու նպատակով Մոսկվա մեկնելիս Ա. Հարմանդայանը նրան առաջարկել է իր ճամպրուկը, որի մեջ տեղադրել էր իր եւ Արտավազդ Մանուկյանի ձմեռային հագուստները: Ճամպրուկում եղել է նաեւ «ծեռի սարքած» նարդի, որի արտաքին տեսքը զարմացրել է Հովիկին: Սակայն Հարմանդայանը բացատրել է, որ արաբ կանչերն այդպիսին են լինում: Նրա նում հերոինի գոյության մասին ինքը միանգամայն անտեղյակ է եղել:

Ճամպրուկն իր մոտ պահել է պահեր մինչեւ Հարմանդայանի ու Արծրունու Մոսկվա գնալը: Հ. Սկրտչյանը հայտնել է, որ ճամպրուկն իր աջեւ չեն բացել եւ բռնելուցքն անձամբ չի տեսել: Առերեսման ժամանակ ամբաստանյալ Սկրտչյանը նույնպես հաստատակամ է մնացել իր ցուցմունքներում: Վերջերս վերաքննչական դատարանում վերջերս, տան հատակագիծն ինքն է ուսումնասիրել մարմնի կարգավիճակով (նախագահն ազատ է ստեղծել միայն խորհրդակցական մարմիններ): Առավել ես, հարկային տեսչությունը չի կարող կից լինել օրենսդիր կամ դատական իշխանության մարմիններին: Հարկային տեսչությունը, անկասկած, գործադիր իշխանության մարմին է եւ պետք է լինի (համաձայն Սահմանադրության 85-րդ հոդվածի) կառավարության մասը: Մնում է ենթադրել, որ «կառավարության կառուցվածքից դուրս բերել» ասելով հասկացվել է դարձյալ հարկային տեսչության կարգավիճակի իջեցում, օրինակ՝ միաձուլում մեկ այլ նախարարության հետ: Եթե այդպես է, առա հարց է ծագում հաստատելա որ նախարարության:

գ) Նախագահի հրամանագրի մասին հաղորդագրության մեջ նշվում է, որ հարկային տեսչության կարգավիճակի փոփոխությունը նպատակ ունի բարելավել նրա աշխատանքը: Մինչդեռ, 1995 թ. որ ամիսների տվյալներով, ոլորտի մուտքերի առաջադրանքը կատարված է 88 տոկոսով: Դա վատ ցուցանիշ չէ Հայաստանի վիճակում գտնվող երկրի համար: Ավելին, դատելով բյուջեային հիմնարկների աշխատավարձերի դարձերի շարունակվող կրճատումներից, անցած երկու ամսում վիճակն ավելի բարվոք է դարձել (սեպտեմբերին շատերը չէին ստացել հուլիսի աշխատավարձը, հոկտեմբերին ստացան մինչեւ սեպտեմբերինը ներառյալ): Կարելի է համեմատել, օրինակ, Ռուսաստանի հետ, որտեղ սեպտեմբերի տվյալներով, կար 28 տրիլիոն ռուբլու հարկերի պակասուրդ տարեկան բյուջեի ավելի քան 16 տոկոսը (որ ամենա բյուջեի 20 տոկոսից ավելի): Վերջերս վարչապետ Չուբայսը նախանշեցին է հատուկ «ռեյդ» հարկային բեռնումներ վերացնելու համար, որին մասնակցում են նաեւ... ուժային նախարարությունները: Հայաստանում կարծես թե դրա կարիքը չի զգացվել: Այնպես որ, բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ հարկային տեսչությունը կառավարության ամենաթույլ օղակը չէ, համենայն դեպս, հավանաբար, վարչապետն այդպես է կարծում: Դրա հետ մնկտեղ, հիշարժան է կառավարության սեպտեմբերի 23-ի նիստը, որի ժամանակ էլ հենց հրապարակվեցին բյուջեի կատարման ընթացքի (կրկնում ոչ վաղ ընթացքի) մասին վերաբերյալ տվյալները: Այդ նիստի կեսին ներկա է եղել հանրապետության նախագահը, ընդ որում, իր եզրակացությամբ նա խստորեն քննադատել է... հարկային տեսչության աշխատանքը (ճիշտ է միայն որոշակի ստորաբաժանումների): Պաշտոնական տեղեկատվությունից այն տպավորությունն է ստեղծվում, որ նախագահը հիշյալ նիստին մասնակցել էր գլխավորապես այդ քննադատական ճառն արտասանելու նպատակով:

Այս բոլորը առիթ են տալիս ենթադրելու, որ մենք վկա ենք նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ վարչապետ Հրանտ Բագրատյանի միջեւ ծագած տարաձայնության:

Եթե այս ենթադրությունը ճիշտ դուրս գա, արդյոք բերեալ հիմք կա որոշ անհանգստության, քանի որ Տեր-Պետրոսյանի և Բագրատյանի խառնվածքը զինակցությունն անկասկած հանրապետության կայունությունն ապահովող կարևոր գործոններից մեկն է:

Սակայն կա մեկ այլ անհանգստացնող գործոն, ոչ թե ենթադրական, այլ իրական: Դա այն է, որ հանրապետության նախագահն իր ստորագրությունն է դնում բերանակ, հաղորդագրություն ստեղծված փաստաթղթի տակ: Այդպիսին էր նաեւ Պետարիտրաժին ուղարկված նամակը, որով նա խնդրում էր կասեցնել «Գոլոս Արմենիի» գործով դատավճռի իրագործումը (մինչդեռ, դատավճիռը գոյություն չուներ): Այդպիսին է եւ խնդրո առարկա հրամանագիրը, որով կարգադրվում է դեռ երեք ամիսը չբոլորած կառավարության կառուցվածքից հանել նրա մի կարեւոր բաղադրիչը, բայց չի ասվում, թե ինչ է պետք անել դրա հետ ապագայում:

ՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՂԻՇԱՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

Շարունակվում է հրեական գործով մեղադրյալներ Մարտին Նազարեթյանի եւ մյուսների դատաքննությունը (տես «Ազգ», 11 սեպտեմբեր), որոնք մեղադրվում են նորակոչիկ Հարությունն Հայրապետյանի սպանության, ինչպես նաեւ դաժան ծեծի դատապարտմամբ Կարեն Պետրոսյանին եւ Աշոտ Թումանյանին ինքնատպանության դրդելու փորձի մեջ: Փորձարկվում է, որ նախկին հրամանատար նախապես իմանալով, որ Նազարեթյանը մասնակցություն է ունեցել զինվորի ծեծին (բեկուզ ամբաստանյալի հայտարարած երկու աղտակով), վերջին հրամաններից մեկով դատապարտելով գործին առնչվող սպաներին, անգամ չի նշել այժմ ամբաստանյալ Նազարեթյանի անունը:

Ներկաների համար բավական դժվար է, որ նախկին հրամանատարը

ԱԶԳ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՄԲՈՂՋ

Նոր ակադեմիա, թե՞ մի նոր վարչական վերնահարկ

Ի՞նչ կլինի մեր հանրապետության գիտության վիճակը, եթե յուրաքանչյուր նախարարության համակարգում ստեղծվի համապատասխան գիտությունների ակադեմիա: ԳԱԱ-ի արհեստական ճյուղավորման, կամ ավելի ճիշտ, ոչառակցման սկսված գործընթացը ակամա հիշեցնում է Հայաստանի գրողների միության եւ հասարակական-քաղաքական տարբեր կազմակերպությունների տրոհման տխրահռչակ երեւույթը: Արդեն իսկ ստեղծվել են ճարտարագիտական, բժշկական, գյուղատնտեսական, փիլիսոփայական, արվեստի եւ այլ ակադեմիաներ:

Այն փաստը, որ հայ գիտական ճանաչողական միտքը հաստատեց Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ստեղծման օրից (1943 թ.) հակայական ներուժ էր կուտակել եւ իր ստեղծման տարբեր դրդրդումներով մեծ ճանաչում եւ հեղինակություն ձեռք բերել ամբողջ աշխարհում, ոչ մեկի կասկածը չի կարող առաջացնել: Հայաստանի Գիտությունների ակադեմիան իրականացնում էր հանրապետությունում կատարվող բոլոր հետազոտությունների գիտական ղեկավարումը եւ համակարգումը, այն լիաժամ համաձայնությամբ էր ոչ միայն իր անվանը, այլեւ բովանդակությանը: Ակադեմիան փաստորեն ներկայացնում էր Հայաստանի գիտությունը: Արժե նիշեր, որ գիտահետազոտական հիմնարկությունների բիվը հանրապետությունում (ինստիտուտներ, լաբորատորիաներ, կայաններ եւ այլն) 1990 թ. հասնում էր 156 միավորի, որտեղ աշխատում էին 22000 գիտաշխատողներ (հաշված սպասարկող անձնակազմը), որոնցից մոտ 1020 ատենադոկտորներ, 7200 թեկնածուներ, 840 դոկտորներ, մոտ 100 ակադեմիկոսներ եւ թղթակից անդամներ: Այդ բիվում Գիտությունների ակադեմիայի համակարգում աշխատում էր 3350 գիտաշխատող, որոնցից 1314 թեկնածուներ եւ 220 դոկտորներ: Թե ինչպիսի փոփոխությունների է ենթարկվել հանրապետության գիտության կադրային կազմը 1991-1995 թթ., անհայտ է, որովհետեւ ոչ ԿՎՀՀ-ում եւ ոչ էլ որեւէ տեղ ակադեմիայում, բուհերում, թե ճյուղային գիտության ոլորտներում, չկան ճշգրիտ տվյալներ: Պատահական չէր, որ 3 միլիոն բնակչություն ունեցող հանրապետության մեջ բոլոր առաջնակարգ գիտնականները ընդգրկված էին մի ակադեմիայի մեջ, դարձնելով գիտությունը մի խիտ միջավայր, ուժեղ մասնագիտական բուռնգիր օժտված իր արդյունավետ հոդատակապացությամբ եւ ստեղծագործ կարողություններով: Դժբախտաբար, այսօր ընթանում է միանգամայն հակառակ գործընթացը գիտության դեհիստեղծացման, այսինքն ԳԱԱ-ն կարծես թե կորցնում է իր վաղեմի շուքը, եւ նրա լուռ համաձայնությամբ գոյանում են նորանոր ակադեմիաներ անկասկած, նոսրացնելով գիտական միջավայրը եւ փոքրացնելով մեր ազգային գիտության կաճառի դերը միջազգային ասպարեզում:

Նոդատակ չունենալով ինձ վրա վերցնել բոլոր ստեղծված եւ ստեղծվող ակադեմիաների մասին մենագրաբանություններ անելու դատապարտավորություն, այնուամենայնիվ, ուսումնասիրեմ եմ համարում որոշ դատողություններ անել Գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի մասին, այն էլ դրա ստեղծման մամուլում հրապարակված տեղեկությունների հիման վրա:

Անցյալ տարի ստեղծվեցին գյուղատնտեսական երկու ակադեմիաներ ասոմնական եւ գիտական: Եթե ասոմնական գյուղակադեմիայի ստեղծումը, որը հիմնված էր գյուղատնտեսական եւ անասնաբուծական ինստիտուտների միացման վրա, առաջ բերեց բառն բանավեճեր եւ տարակարծություններ, ապա ԳԱԱ-ն ասպարեզ իջավ կարծես թե հանդարտ, անաղմուկ, առանց որեւէ խոչընդոտի, գիտական ճանաչողության երկանկներում (նույնիսկ ազգային գիտության բնագավառում) առանց հարցի լայն ենթարկմանելու: Մի հանգամանք ենք, եթե ասոմնական գյուղակադեմիայի ստեղծման նախաձեռնողը հենց կոստավարությունն էր, ապա ԳԱԱ-ի նախաձեռնողներ անհայտ գիտնականներ էին, որոնք Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի եւ այլնի օրինակով նոդատակադրվել էին ստեղծել նաեւ հայկական գյուղգիտությունների ակադեմիա, առանց հաշվի առնելու հանրապետության հոդատարածությունը եւ գիտության վիճակը: Քանի որ այդպես էլ անհայտ մնացին նրա ստեղծման անհրաժեշտության եւ հրատապության հիմնավորումներ եւ բացատրություններ, ինչպես նաեւ թե ի՞նչ հիմունքներով է կատարվել ակադեմիկոսների եւ թղթակից անդամների ընտրությունը, ուստի կարելի է եզրակացնել, որ հիշյալ մարմնի առաջացումը ավելի շուտ նոդատակ էր, քան ազգային գիտության զարգացումը խթանող միջոց, իսկ անդամների հավաքագրումը կամայական:

Տողերիս հեղինակը համոզված չէ, որ այդ բոլորը արվել է «ակադեմիկոս» եւ «ակադեմիայի թղթակից անդամ» գայթակղիչ եւ հնչեղ տիտղոսներին տիրանալու նոդատակով: Ինչպիսի՞ սակայն, ակադեմիան աստեղծվել եւ գործում է, եւ նույնիսկ նստաշրջաններ է գումարում: Դրա օգոստոսի 30-ին գումարած արդեն 3-րդ նստաշրջանի մասին տեղեկանում ենք մամուլի հաղորդագրություններից («ՀՀ», 31 օգոստոսի, «Ռանչպար», 6 սեպտեմբերի, 1995 թ.):

Այդ նստաշրջանում ծավալուն զեկուցումով հանդես է եկել գյուղակադեմիայի նախագահ Սերգեյ Ղազարյանը: Պարոն Ղազարյանը իր կոչերում նշել է, որ «Գիտությունների ազգային ակադեմիայի նախկին ղեկավարության կողմից երկար տարիներ անտեսվել է գյուղատնտեսական բնագավառի գիտնականների դերը ԳԱԱ համապատասխան բաժանմունքի կազմալուծումից հետո: Սակայն անտեսված կարգավիճակը չխոչընդոտեց ագրոհամակարգի կոլեկտիվների եւ առանձին գիտնականների գործունեությունը»: Եզրակացնում են, որ հենց այդ նստաշրջանում սուաջ քաշվեցին հիշյալ ակադեմիայի հիմնարար եւ սկզբունքային խնդիրները: Տարակուսանք է առաջացնում այն հանգամանքը, որ զեկուցողը իր ենթադատական խոսքը ողջեղով ԳԱԱ-ի նախկին ղեկավարություն միաժամանակ ոչ մի խոսք չի ասում նեղկա ղեկավարության վերաբերմունքի մասին: Մի գուցե նեղկա ղեկավարությունը հաշվի կանի գյուղատնտեսական բնագավառի դերը հանրապետության ընդհանուր գիտության մեջ եւ նորից կբացի այդ բաժանմունքը իր կազմում, եւ հարկ չի լինի մի նոր ակադեմիայի հիմնադրման: Այս հարցերը ընթերցողի համար մնում են անհայտ: Մյուս կողմից, երբ ԳԱԱ-ի այդ անտեսումը չի խոչընդոտել ճյուղի գիտության զարգացմանը եւ գիտնականների գործունեությանը, ապա էլ ինչ անհրաժեշտություն կար այդ կառույցի ստեղծման համար, երբ այդ նույն մարդիկ (ԳԱԱ-ի ակադեմիկոսներ եւ թղթակից անդամներ) ներկայումս ղեկավարում են գիտահետազոտական ինստիտուտներ, ամբիոններ, նախարարություններ եւ այլն: Պարոն Ղազարյանի դատողություններից այդ 7-8 տոկոս ներուժի վրա ամենեին հարկ չկա առաջացել մի նոր բյուջետային վարչական վերնահարկ (ԳԱԱ-ն արդեն հայ է ներկայացրել կառավարությանը դեհական կարգավիճակ եւ ֆինանսավորում ստանալու համար: Կասկած չկա, որ այս օրինակին կհետեւեն նաեւ մյուս ինքնակոչ ակադեմիաները) եւ դահանջել դեհտությունից նոր հաստիքներ, միջոցներ, շենքեր, մեքենաներ եւ այլն: Աղբեղ միայն կարելի է, որ գիտական բեմաներ չֆինանսավորելու դատճառով կրճատվում են գիտության կայրերը, իսկ մյուսմ կողմից այդ փոքրացող մարմնի վրա ֆինանսավորում է ոգում ստանալ մի այլ մարմին, որը որեւէ կոնկրետ հետազոտությամբ չի զբաղվելու: Կամ ծրագրվում է հանրապետության գյուղատնտեսական մի շարք գոտիներում ՀԳԱԱ-ի բաժանմունքների բացում, այդ դեպքում, երբ դեհտությունը չի կարողանում ֆինանսավորել նույնիսկ մանկապարտեզներ, դպրոցներ, բուհեր, որոնք ըստ իս, ավելի առաջնային են: Բացի այդ, յուրաքանչյուր շրջանում գործում էին գյուղվարչություններ, հայգյուղտեխնիկայի եւ հիմնացման բաժանմունքներ, զոնալ լաբորատորիայի մասնագետներ, որոնք վաս չէին կատարում իրենց վարչական եւ մասնագիտական դատասկանություններ: Իսկ ինչո՞վ դեհտ է զբաղվեն շրջանային «ակադեմիաները», երբ անհայտ է նույնիսկ կենտրոնական մարմնի դերը: Մյուս կողմից, կարեւորագույն հարցը այնուամենայնիվ մնում է գիտության բազայի հարցը: Համոզված եմ, որ հիշյալ ակադեմիան ներկայացնող անձինք բաշտեղյակ են, թե ինչ վիճակ է տիրում գիտահետազոտական ինստիտուտներում, կայաններում, լաբորատորիաներում: Ի հակադրություն դարոն Ղազարյանի նկարագրած ագրարային գիտության աշխուժացման, աշխատողների կեսից ավելին ազատված են, շենքերը դատարկվել են, սարքավորումները մանգրդվում եւ ֆիզիկապես ոչնչանում են, անալիզներ համարյա թե չեն կատարվում, հետազոտություններ 90 տոկոսով սառեցված են, փորձնական տնտեսություններ բաղանված են եւ անտերության մատնված (օրինակ, խոզաբուծության ինստիտուտի բազաներ): Ակնհայտ է, որ այդպես անհնար է առկա օբյեկտներ նախկին վիճակում դահել եւ անհատդ դեհտ է օդերեւութային վերամիավորման միջոցառումներ իրականացնել: Անցյալի ընդարձակման (նմա ուռճացման) սկզբունքը այլեւս տեղ չի կարող ունենալ մեր կյանքում, դեռ ավելին, դարտադիր է դառնում սեղմման սկզբունքի կիրառումը: Ագրարային համակարգում 9 գիտահետազոտական ինստիտուտներ եւ մի քանի կայաններ արդեն մեծ ճոխություն են Հայաստանի համար, որի մշակովի հողային տարածքը կազմում է ընդամենը 570 հազար հա: ԳԱԱ-ն ստեղծողներ արդյոք միտում նավոր կերողով աչքաթող չե՞ն արել այդ ինստիտուտների միավորման եւ առաջացման սկզբունքային խնդիրները: Չէ՞ որ, եթե այդ ինստիտուտների քանակը կրճատվի եւ հասցվի, ասենք, 2-3-ի, ապա իմաստ չէր ունենա դրանց հիման վրա ակադեմիա ստեղծելը: Ճիշտ այնպես, ինչպես, երբ տվյալ դեհտությունն ունի ընդամենը մեկ դիվիզիա, ապա այնտեղ հարկ չկա ունենալ բանակի գլխավոր շտաբ, բավական է հենց իր դիվիզիայի շտաբը, այլ կերդ ասած նախարարության գիտության վարչությունը, գումարած նաեւ կոդեգիան եւ նախարարը: Բայց ստեղծողները զնացել են միանգամայն հակառակ ուղղությամբ սկզբից ակադեմիա, հետո կտեսնենք: Տեղին կլինի նաեւ հարցն ուղղել հանրապետության կառավարությանն եւ ԳԱԱ-ի ղեկավարությանը. իմաստունի՞ արդյոք դահել երկու Ակադեմիայի ինստիտուտներ, կամ հոդագիտության եւ ագրոքիմիայի ինստիտուտի առկայությամբ ունենալ ագրոքիմիական եւ հիդրոդինամիկայի ինստիտուտ: Թվում է, թե վրա է հասել «Մեր ոտքերը դաս մեր վերմակի երկարության մեկնելու» ժամանակը:

Խորը բեռահավատության տեղիք է տալիս դարոն Ղազարյանի զեկուցման ամենադատասխանատու մասը, «Չնայած մի քանի ամիսների գործունեությանը, ՀԳԱԱ-ն լուծել է բազմաթիվ կազմակերդչական հարցեր, ամփոփելով ներկայիս այնդիսի հրատապ խնդիրներ, ինչդիսիք են ագրարային հաղաքականության այժմյան վարման եւ իրագործման խնդիրների կենսագործումը, տնտեսական բարեփոխումների հետեւողական իրականացումը, ագրարային համակարգի հետագա զարգացումը, տուկայական կառուցվածքների կատարելագործումը»: Որեւէ կոնկրետ բան զգա՞ր այստեղ, հարգելի ընթերցող, թե՞ հիշեցիր լնացման ժամանակաշրջանի տրաֆարետային կարգախոսները: Վերջին հաշվով, ախր, այդ խնդիրներ վարչական բնույթի խնդիրներ են, որոնցով զբաղվում է հենց ինքը նախարարությունը, եւ ամենեին հարկ չկա հանդես գալ մի նոր վարչական կդդդի դերում:

Հարկ չկա անդրադառնալ դարոն Ղազարյանի զեկուցման մեջ բերված մյուս թեզերին, որովհետեւ այդ ամբողջից փչում է արհեստականության եւ անհեռանկարայնության հոտը: Զեկուցման մեջ բացակայում է ակադեմիայի ստատուսին արժանի գիտության զարգացման կոնկրետ գործողության ծրագիրը: Այ, եթե ակադեմիայի փոխարեն հիմնվեր ագրարային գիտության հասարակական ընկերություն (ասենք, արտագրային ակումբի նման մի բան), որտեղ մուտք ունենար ցանկացած մասնագետ կամ գյուղացի, ապա դա իսկապես առաջընթաց կլիներ, եւ ամենակարեւոր առանց դեհտության բյուջեից կախվելու:

Կա եւս մի շատ կարեւոր հարց, որ գնալով ահագնացող է դառնում, դա գիտության դարտի աշխատողների ծերացման խնդիրն է: Հիշելով «գիտությունը առանց ծերերի կատակերգություն է, առանց երիտասարդների ողբերգություն» հայտնի ասույթը, ակամա համոզվում ես, որ մեր գիտությունը միակողմանի խորանում է ողբերգության մեջ:

Կասկած չկա, որ հայ ժողովուրդը խոր ակնածանք ունի ակադեմիայի եւ ակադեմիկոսների նկատմամբ: Ակադեմիկոսը կամ թղթակից անդամը յուրահատուկ օժտվածություն եւ արտատոր ունակություններ ունեցող այն անհատներն են, որոնք գիտության մեջ բոլորում են իրենց ինքնատիպ ակոսը, ստեղծում եւ դեկավարում նոր ուղղություններ: Թող յուրաքանչյուր գիտնական ցույց տա իր ակոսը հայ մտքի ճանաչողության դաշտում եւ նոր միայն կոչվի ակադեմիկոս:

ՎԱՀԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ



digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՍՈՒ

Սփյուռքի դիրքորոշումը անհրաժեշտ է սահմանազատել Հայաստանի դիրքորոշումից

Ասում է թուրք գիտնական Թաներ Ակչամը

Թաներ Ակչամ անունը հայտնի է հայ ընթերցողին: Պարզապես հիշեցման կարգով նշենք, որ նա 1977 թ. սփոփված լրել է Թուրքիան: Բնակություն հաստատելով Գերմանիայում, Ակչամը երկար տարիներ աշխատել է Համբուրգի սոցիալական հետազոտությունների ինստիտուտում: Զբաղվում է հայկական հարցով, հեղինակ է մի շարք ուսումնասիրությունների, որոնց մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում 1992 թ. լույս տեսած «Թուրքական ազգային ինքնությունն ու հայկական հարցը» աշխատությունը: Ի դեպ, «Միլլիյեթից» տեղեկացանք, որ վերջերս Ակչամը վերահաստատվել է Թուրքիայում: Նույն թերթը հարցազրույց է անցկացրել նրա հետ: Հարցազրույցում արծարծվող խնդիրների մեջ Ակչամը բերեց առանձնակի նշանակություն է տալիս Հայ դատին եւ պահանջատիրությանը, ընդգծում է «ցեղասպանության» փոխադրման անհրաժեշտությունը քաղաքական ակադեմիական ոլորտ: Միաժամանակ նա հայ-թուրքական մերձեցումը դիտում է որպես սփյուռքահայությանը զսպաբաժիկ ազդեցություն գործադրելու միջոց եւ հստակ սահմանագիծ է անցկացնում Հայաստանի ու սփյուռքի միջեւ: Միամիտ կլինի մտածել, որ սրանք զուտ անձնական դատողություններ են, ըստ ամենայնի, պաշտոնական Անկարային են պատկանում եւ հավանաբար դրվեն Թուրքիայի հայկական քաղաքականության հիմքում: Թեեւ հարցազրույցը տեղ է գտել «Միլլիյեթի» սեպտեմբերի 15-ի համարում, այնուամենայնիվ, չի կորցրել այժմեականությունը: Հատկապես հայ-թուրքական հարաբերություններում մերձեցումը դեռ շարունակվում է: Հակառակ դրան, հետզհետե ռուս-թուրքականն է տրվում: Քրդական խորհրդարանի նիստը, որ օրերս գումարվել է Մոսկվայում, Պեսդուժայի շենքում, կարծում ենք որոշակի պատկերացում է տալիս այդ հարաբերությունների ընթացքի մասին: Ելնելով այս ամենից, ավելորդ չենք համարում «Միլլիյեթի» հարցազրույցը Ակչամի հետ մասնակի կրճատումներով ներկայացնել ընթերցողի ուշադրությանը:

Հ. Դ.

– Թուրքիայի եւ Հայաստանի փոխհարաբերությունները բեւեռոխել են կարգավորման փուլ: Ինչպիսի՞ն կլինի դրանց ընթացքն առաջիկայում:

– Կարծում եմ, Թուրքիա-Հայաստան մերձեցումը հոգեբանական առումով դրական է ազդելու կողմերի վրա, նպաստելով ժողովրդավարության հետագա զարգացմանը երկու երկրներում: Դրա հետ մեկտեղ Հայաստանը կարեւոր նշանակություն ունի տարածաշրջանում Թուրքիայի խաղաղարար դերի, ինչպես նաեւ Արեւմտքի հետ նրա ինտեգրացման համար:

– Հայ հասարակական կարծիքն ի՞նչ վերաբերմունք ունի Թուրքիայի հանդեպ:

– Պատմական անցյալի հետքերն, ինչ խոսք, առկա են, գիտակցվում են կանխակալ մոտեցումներ: Դրանում մեղքի իր բաժինն ունի նաեւ Թուրքիայի 80-ամյա դիրքորոշումը: Սակայն գիտեմ, որ հայկական իշխանություններ իրատեսական եւ ողջամիտ մոտեցում են ցուցաբերում, Թուրքիայի հետ բարեկամության հարցում շատ անկեղծ են:

– Իսկ ընդդիմությունը բաժանո՞ւմ է նրանց մոտեցումը:

– Անհրաժեշտ է առանձնացնել դաշնակցականներին: Հայ ազգայնամոլներ ունեն նույն վերաբերմունքը, ինչ բուրք ազգայնամոլները:

– Հակադրության մեղմացման, Հայաստանի հետ հարաբերությունների զարգացման գործում ի՞նչ ներդրում ունի Ազգայնական շարժում կուսակցության նախագահ Ալփարսլան Թյուրեշը:

– Թյուրեշն ու նրա գլխավորած Ազգայնական շարժումն այդ հարցում անուրանալի մեծ են... Երբ ուզում ենք ըմբռնել տարածաշրջանի քաղաքական զարգացումների էությունը, առա դեռեւ է վերհիշենք, թե ինչ դիրքերում է առաջացել առաջին աշխարհամարտը: Միջազգային ուժերը ներկայումս այդ ժամանակների հոգեբանությամբ են քաղաքականության վարում: Ըստ Ազգայնական շարժում կուսակցության, կովկասյան քաղաքականության մեջ որոշիչ դեր Ռուսաստանին է դատկանում: Ռուսաստանը դիտվում է որպես գլխավոր սպառնալիք: Թեեւս դրանով է դայմանավորված ազգայնամոլների դիրքորոշման մեղմացումը Հայաստանի հանդեպ: Սակայն նման դիրքորոշումը դարատում է նաեւ իրատեսական մոտեցման ցուցաբերում դեպի դատմական անցյալը:

– Ինչպիսի՞ն է սփյուռքի, հատկապես ԱՄՆ-ում ու Ֆրանսիայում գործող հայկական կազմակերպությունների մոտեցումը Թուրքիային մերձեցման հարցում:

– Անհրաժեշտ է հստակ տեսանելիք անցկացնել Հայաստանի Հանրապետության եւ հայկական սփյուռքի միջեւ: Չափազանց ուշագրավ է, որ Հայաստանը սփյուռքահայերին քաղաքացիության իրավունք չի տալիս: Կարծում եմ, սփյուռքը Անկարա-Երեւան փոխհարաբերություններին զուգընթաց կհրաժարվի այն կոչ դիրքորոշումից, ինչ ունի:

– Մի տեսակետի համաձայն, ԱՄՆ-ում ու Ֆրանսիայում բնակվող հայերի զգալի մասը ցեղասպանությունից կառչում են զուտ նրա համար, որպեսզի այդ երկրներում չլուծվեն եւ պահպանեն իրենց ազգային ինքնագիտակցությունը:



– Իսկ ես գտնում եմ, որ Թուրքիան, երբ վերացնի ցեղասպանության վրա դրված տարոն եւ այդ հարցը ազատորեն ուսումնասիրելու հնարավորություններ ցուցաբերի, առա կարեւանա հայության դրական արձագանքներին: Հայ համայնքներին հուզում է այն, որ ստրոյ 80 տարի հուզում է Թուրքիայի կողմից լռության է մատնվում անարդարությունը:

– Թուրքիան, ձեր կարծիքով, արդեն սկսե՞լ է արձարձել ցեղասպանության հարցը:

– Նոր է սկսում: Դրա դրական արդյունքներ շուտով կստացվեն: Տվյալ դեպքում գլխավոր ակադեմիական շրջանակներն են: Ինձ թվում է, բարեկամական շրջանակները դատրաստվում են հարցը անկաշկանդ քննարկել: Իմ կարծիքով, ցեղասպանության հարցի քննարկման գլխավոր խոչընդոտը ոչ այնքան դետական բնույթի արգելքներն են, ինչքան մեր ազգային ինքնության խնդիրներն:

– Հայ-ադրբեջանական հակամարտությունը Թուրքիա-Հայաստան փոխհարաբերությունների զարգացումն արգելակող գլխավոր գործոնն է: Ինչպիսի՞ն է լինելու հայ-ադրբեջանական հարաբերությունների ընթացքը:

– Ըստ իս, դրանք կարգավորման եզրակացության եւ հակված է եղել դատժել մեղավորներին: Այնուհետեւ նա հրաժարվել է այդ մտքից: Ինչո՞ւ:

– Արարատը մի առիթով սպանված հայերի թիվը 800 000 էր ներկայացրել: Եւ այդ մասին առնվազն երեք անգամ նշել էր: Հատկանշական է, որ 1920թ. ապրիլի 24-ին Մնջլիսի բացման նստաշրջանում նա 1915 թ. իրադարձությունները որակել էր որպես դատմական մեծ ողբերգություն: Նա մեղավորներին դատժել անհրաժեշտության մասին բազմիցս արտահայտվել էր օտարերկրյա լրագրողների մոտ: Արդեն Ամասիայի արձանագրության առաջին հոդվածը նախատեսում էր իթթիհադական դարագլուխներին դատժել, իսկ դատիժը այս հարցում ավելի կարեւոր էր, քան քաղաքականությունը:

Ընդ որում, խոստումներ էին տրվել մեղավորներին ոչ թե միջազգային դատարանում, այլ Թուրքիայում դատելու մասին: Դրանք ժամանակի ընթացքում մոռացության տրվեցին երեք հիմնական դատճառներով: Առաջինը դատավարությունը Թուրքիայի մասնատմանը ծառայեցնելու անգլիացիների միտումներն էին: Երկրորդ, երկրի արեւելքում հայերի հետ դատերազմի բռնկումն էր: Հայերը, մի հիշ էլ Արեւմտքի դդմամբ, մեծ Հայաստանի հովերով էին տարվում: Երրորդն այն էր, որ ճնշելականների շարքերում կային ոչ մի բովով իթթիհադականներ:

– Թուրքիայի մերժողական դիրքորոշումը արդյո՞ք չի՞ դայմանավորված այն մտավախությամբ, որ ցեղասպանության ճանաչմանը կհաջորդեն հողային դահանջները:

– Սա ոչ իրավացի, բայց հասկանալի մոտեցում է: 1878-ից մինչեւ 1917 թ. իր տարածքի 80 տոկոսը կորցրած ցի դետության այդ մտավախությունը կարելի է ըմբռնել: Ես այդ մասին նշել եմ նաեւ Հայաստանում, ընդգծելով, գուցե դա ձեզ աբսուրդ թվա, բայց թուրքերի մտավախությունը դետք է հասկանալ: Սեւրի եւ Լոզանի դայմանագրերը այլեւս չի կարելի կապել սահմանային փոփոխությունների հնարավորության հետ: Առանց սահմանային հարց շոշափելու մենք կարող ենք հաշտ ու խաղաղ եղբայրաբար ապրել: Անհրաժեշտ է դատմության մեջ բացել նոր էջ: Բայց ոչ թե հողային կոմպենսացիաների, այլ մարդու իրավունքների համար:

ՍՈՆՐԵԱԼ

Կանադահայերը դեմ էին Քվեբեկի անջատմանը

ՍՈՆՐԵԱԼ, 1 ՆՈՅԵՄԲԵՐ, ՓՍՍՏ: Ինչպես հայտնի է, Կանադայի Քվեբեկ նահանգի բնակչությունը հոկտեմբերի 30-ին անցկացված հանրաքվեի ժամանակ ձայների չնչին մեծամասնությամբ դեմ քվեարկեց Կանադայից Քվեբեկի անջատման առաջարկին: Վերջին տվյալներով անջատման դեմ է քվեարկել մասնակիցների 50,5 տոկոսը, կողմ՝ 49,5 տոկոսը: Եթե հանրաքվեն դատասխաներ անջատման կողը, ապա Կանադան կկորցներ իր բնակչության մեկ չորրորդն ու տարածքի մեկ վեցերորդը:

Եւ այսդես, վերջին 15 տարիներին երկրորդ անգամ Կանադայի Ֆրանսախոս Քվեբեկ նահանգի բնակչությունը հանրաքվեի մասնակցեց՝ որոշելու երկրամասի քաղաքական կարգավիճակը՝ անկախանա՞լ, թե՞ մնալ Կանադայի կազմում: Սակայն հանրաքվեի նախորեին կատարվող կանխատեսումներով, առաջին անգամ անջատողականների հաղթանակի հավանականությունը խիստ մտահոգեց Կանադայի դատաբանական իշխանություններին, ինչպես նաեւ բազմաթիվ դետությունների եւ միջազգային ֆինանսական շուկաների:

Հատկանշական երեւույթ էր, սա կայն, դարտվող կողմի կեցվածքը, որն անմիջապես ընդունեց ժողովրդավարական օրենքների վրա հիմնված արդյունքը: Նրանք իհարկե, փորձեցին նաեւ դարտությունից հաղթանակի բերկոր դոկել, հայտարարելով, որ առկա արդյունքները վկայում են քվեբեկցիների հարաճուն դահանջատիրությունը եւ նրանք կշարունակեն իրենց դայքարը: Քվեբեկի ղեկավար Պարիզոն արդյունքների հրադարակումից հետո իր համախոհներին հայտնեց, որ անկախությունը կարճ ժամանակով հետաձգվել է եւ ավելացրեց, որ առաջի կայում այլեւս 15 տարի չեն սպասի նոդատակի հասնելու համար: Իսկ Կանադայի վարչապետ Կրետիենը, որ նույնդես ֆրանսախոս քվեբեկցի է, համերաշխության կոչ արեց դարտված կողմին: Անջատողականներն իրենց հերթին փորձում են նաեւ քավության նոխազ գտնել իրենց դարտությունն արդարացնելու համար: Մասնավորապես արդեն լուրեր են տարածվել, թե հանրաքվեի այս ելքը ազգային փոքրամասնությունների դիրքորոշման եւ նա խընտրական դայքարում մեծ գումարներ ներդնելու արդյունք է: Կանադայի շատ ղեկավարներ վտանգավոր են նկատել ու ննջադատել են փոքրամասնություններին մեղադրելու քայլը: Հայ համայնքի դիրքորոշման մասին տեղեկություններ ձեռք բերելու եւ ադագա հեռանկարի մասին դատկերացում կազմելու համար «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությունը դիմել է Սոնրեալում լույս տեսնող «Հորիզոն» թերթի խմբագիր Կիրո Մանոյանին: Սակայն ժամանակային տարբերության դատճառով զրույցը տեղի է ունեցել հանրաքվեից առաջ:

«Այս դայքարում յուրաքանչյուր քվեն մեծ արժեք ունի եւ այդ դատճառով Քվեբեկում ապրող բոլոր փոքրամասնություններն ուշադրության կենտրոնում են: Մեր գաղութի բնակչությունն ակտիվ մասնակցում է դայքարին: Ինչ մնում է անհատ հայերի տարադրություններին, ապա մեծ մասով «ոչի» կողմնակից են: Եւ դետք է նկատի ունենալ, որ Կանադայի գաղութը գաղթածներից է բաղկացած, որոնք այստեղ են եկել քաղաքականապես կամ տնտեսապես անկայուն երջաններից եւ հավանական է, որ անջատումն անկայունության սկիզբ դնի այստեղ: Կա, իհարկե, նաեւ փոքրամասնություն, որը գտնում է, թե Հայաստանի Հանրապետության անկախության ջատագով ենք եղել այսման տարի եւ նկատի առնելով, որ Հայաստանն էլ հանրաքվեով անկախացավ ի վերջո, դետք է ուրգելի չլինենք, որ քվեբեկցիներն էլ հասնեն անկախության», ասել է Կիրո Մանոյանը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 3-ին, ժամը 11-ն, Հայաստանի Գրողների միության մեծ դահլիճում տեղի կունենա Թումանյանի շրջանի եւ Ալավերդի քաղաքի գրողների ստեղծագործությունների քննարկում

77 մակույթի նախաարարություն
Թումանյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտե
Ալավերդու քաղաքային խորհրդի գործադիր կ
Հայաստանի գրողների միություն

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Լոնդոնը չտեսած՝ բեմն ու սրահը նվաճած վերադարձանք

Հոկտեմբերի 19-ին Դրամատիկի «Մեծ լռությունով»՝ մուտք Լոնդոն

Երեւանի Դավիթանյան դրամատիկական թատրոնն օրերս վերադարձել է Լոնդոնից, որտեղ Վաթերման Սիրքը դրոֆեսիոնալ թատրոնի բեմում առաջին երկու օրը ներկայացրել է Պերճ Զեյթունցյանի «Մեծ լռությունը», իսկ հաջորդ երկու օրերին «Քիչ մը ամեն բան» դայմանական վերնագրի տակ Պարոնյանի մանրատաումներից. «Ատամնաբույժն արեւելյանից» եւ «Մոռանալ Հերոստրատից» հատվածներ. նաեւ աստմունք: Լոնդոնի Թեթեյան մշակութային միության հրավերով 4-օրյա հյուրախաղերին մասնակցում էին Դրամատիկի 8 դերասաններ. թատրոնի գլխավոր բեմադրիչ եւ գեղարվեստական ղեկավար Արմեն Խանդիկյանը եւ Պերճ Զեյթունցյանը: Մասնաճյուղի 20-ամյակի կապակցությամբ այս հրավերը (որին տեխնիկապես նպաստել էր նաեւ «Ազգի» խմբագրությունը) կարեւորվում է նրանով, որ սա փաստորեն հայ ժամանակակից թատրոնի մուտքն է Լոնդոն: Մոսկովյան հաճախակի ելույթներին սովոր դրոֆեսիոնալ թատերախմբերն այսօր աղրում են կղզիացած, բնականաբար այսօր օտար բեմում ելույթ ունենալու դարտադիր նվազագույնը 4-օրյա այս հյուրախաղերով ինչ-որ տեղ դարդվեց: Զմոռանանք նաեւ, որ բեմից առաջին անգամ հայերեն խոսք լսող գաղութի կյանքում այն իսկապես հայորեն ապրելու ազդակներ շատ ունի:

Ամեն ինչ բարձր մակարդակով էր կազմակերդված. քն թատրոնի հասցեն, որը դրոֆեսիոնալ լինելուց բացի, նաեւ հետաքրքրություն էր տարբեր մասերից այնտեղ շատդող գաղդաբնակների համար (հայաշատ շրջանում է), թե հոգատարությունը մեր թատրոնի նկատմամբ, զդայը սկսում էր մի քիչ բեռահավաք էր, բայց անմիջապես հանձնվեց ոգեւորությունը. խանդավառություն. ծափեր, արցունքների միջից ջերմ խոսքեր: Այն բանը կարծիքը (որ մեր մեջ ավելի հաճախ տիրապետող է), թե մեր առջեւ սառը հասարակություն դիտի լինի. անմիջապես փոխվեց»: Պարոն Զեյթունցյանի ասելով, հայ թատրոնի մուտքը համախմբել էր ողջ գաղութը. իսկ ներկայացումն այնասիճան հուզել էր, որ նորից տեսնելու ցանկություն հայտնեցին: Դերասան Թորոս Խաչատրյանը հիշեցնում է հանդիսատեսի համար անոդասելի էր նաեւ, որ դրամայից կարող էր հաճույք ստանալ լաց լինել եւ հաճույք ստանալ: «Սվյատոսլավիչն ասում են խնդալ կուզենք, բարոնակում է դարոն Զեյթունցյանը, ասել է, թե մենք դիտի կատակերգություն հրամցնենք, բայց հանդիսատեսի տրին խոսող բեմա էր չէր կարող չհուզել»: Արմեն Խանդիկյանը միջամտում է. «Մեր համեստ օգուտն էր հայադահդանության գործին, չնայած թատրոնի համար էլ կարեւոր էր նաեւ ուշադրի տեսնելու ի մասով. միշտ մտահոգ ենք եղել «փոխադրվող» թատրոն լինել. շատկայական հարաբերություններ ճկունություն են դահանջում»: Բեմադրիչը շնորհակալ կարեւոր մի հանգամանք եւս նշել. «միջին» հայերենով գրված այս դիեսն (արեւմտահայերենը տիրապետող է, բայց բուրերի հետ երկխոսություններ բնականաբար արեւելահայերենի միջամտությամբ են կայանում) այլ գաղութներում դիտողությունների առիթ է տվել արեւմտահայերենի ապավադում նկատվելով. բայց լոնդոնաբնակ հայ հանդիսատեսը հիշատակածը խնդիր չդարձրեց ընթրնելով ինչ-որ տեղ բեմադրական այս նրբությունը: «Կարո՞ղ էիք խաղացանկից դրիշ ներկայացում էլ ներկայացնել, հաջողությունն արդյո՞ք առաջին հերթին դիեսի ընտրությամբ չէր դայմանավորված» հարցին, դրն Խանդիկյանն ասաց, թե հրավիրող կողմի համար չէին ուզենա «վտանգավոր» բան անել, բայց Զեյթունցյանը, որ հրաշալի է ճանաչում հայ տարագույն գաղութը, նորից է շեշտում, որ Դրամատիկի ներկայությունն առաջին հերթին ադահովեց գաղութի միասնությունը. «Մշակույթն է, որ կադում է Սիյոտոի հատվածներ»: «Դահլիճում տարբեր հասակդրությունններից մարդկանց տեսանք (ինչ նախորդ երկրներում դժվար եմ նկատել). թեմայանը կարողացել էր միավորել բոլորին. Անգլիայում Հայաստանի դեսպան Արմեն Սարգսյանն էլ սակատեց ու հատատեց մշակույթի հողի վրա միաբան կլինենք»:

Դերասանուհի Գոհար Իգիթյանի առաջին հյուրախաղն է, բնականաբար տպավորված է: Հատատելով նախորդ ասածներդ շարունակում է. «Արքուր Ուրմազյանի ասմունքը հուզել էր նաեւ նրանց, ովքեր հայերեն չէին խոսում»: Լեոն Շարաֆյանը, որ առաջին անգամ Լոնդոնում է Թափառնիկոս խաղացել, կարոտ ունի Արմեն Խանդիկյանը Նիկո էր խաղում 20 տարի առաջվա նման, կուզի, որ ներկայացումն այստեղ էլ վերականգնենք: Պերճ Զեյթունցյանն ափսոսում է, որ Լոնդոնի հանդիսատեսը չդրոբռնված վերադարձան. «Եղանք խոշոր խաղաքում, բայց տպաներդ Լոնդոնը չտեսան. նաև գալու ժամանակ չկար. առավոտից իրիկուն աշխատում էին»:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎԱՆԵՓՅԱՆ

ՀՈԳՍԵՐ

Իսահակյան գրադարանը՝ մատնված ինքնահոսի

Քաղաքային բյուջեից Իսահակյան գրադարանին հատկացվող գումարներն այսօր բավարարում են միայն աշխատողների խորհրդանշական աշխատավարձերի վճարմանը: Այս դայմանների համալրվո՞ւմ են արդյոք գրադահոցները: Այս հարցով դիմեցինք գրադարանի տնօրենուհի Լյուդմիլա Ենիազարյանին: Դարզվեց, որ այստեղ էլ առաջնորդվում են «գլխիդ ճարը տես» սկզբունքով եւ այցելուների ընտրությունը բարձացնելու ուղիներ որոնում սեփական նախաձեռնությամբ, նաեւ՝ դետական կաղերն օգտագործելով: Նոր գրքերը երբեմն գրադարան են մուտք գործում հեղինակների նվիրատվություններով: Դատեհ առիթներով գրադարանին օգնում են հայ առաքելական եկեղեցին, «Հայ դդրություն» մշակութային ընկերությունը: Վերջին շրջանում գրադարանի տնօրենությունը դիմել է գրադարանի դրակտիկայում արտառոց միջոցի՝ աբոնեմենտային բաժնում ստեղծվել է վճարովի ծառայություն. այցելուները կարող են եղած գրականությունից օգտվել նաեւ տնային դայմաններում՝ վճարելով դրա համար չնչին գումար: Ստացված «եկամուտները» հնարավորություն են տալիս ձեռք բերել դտահանջարկ ունեցող գրքերի որոշ նմուշներ: Դժվար վիճակում է դարբերական մամուլի բաժինը, որը զրկված է հաջորդ տարվա բերթերի բաժանորդագրության համար անհրաժեշտ գումարներից: Այսօր բաժինը դեռեւս իր ընթերցողներին կարողանում է տրամադրել սահմանափակ թվով դարբերականներ («ՀՀ», «Ազգ», «Գոլոս Արմենիի», «Լիտերատուրնայա գազետա», «Կոմսոմոլսկայա դրավդա», եւս մի քանի անուն բերբեր, որ գրադարանին բարեգործական հիմունքներով տրամադրում են հենց խմբագրությունները):

Թերթերի բաժանորդագրության համար անհրաժեշտ գումարը տիկին Եղիազարյանը հույս ունի հայթայթել... Երեւանի «Հացաղից», որի տնօրենը մեծահոգաբար համաձայնել է աջակցել գրադարանին:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Ժանսեմ եւ Վերնո՝ ֆրանսիականի մեջ խիստ հայկական կնիք

Ֆրանսական մշակույթի անվանի գործիչների՝ կինոռեժիսոր Անրի Վերնոյին (Աշոտ Մալաֆյան) եւ գեղանկարիչ Ժան սեմին (Ժան Սեմիրջյան) էր նվիրված երեկ Երեւանում կայացած ցերեկույթը, որը արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի եւ համագործակցության հայկական ընկերությունում կազմակերդել էր «Հայաստան-Ֆրանսիա» ընկերությունը: Միջոցառմանը, որը նվիրված էր երկու արվեստագետների ծննդյան 70-ամյակին, ներկա էին մայրաքաղաքի հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ: Ժանսեմի ստեղծագործության մասին խոսք ասացին Հայաստանի Ազգային դատկերասրահի հայ գեղանկարչության բաժնի վարիչ Վեհանուշ Փունարջյանը եւ Երեւանի ժամանակակից արվեստի բանգարանի գիտաշխատող Մերի Պատվականյանը: Անրի Վերնոյի հետ փարիզյան հանդիդումներից հուշեր դատմեցին ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանը, Հայաստանի արտգործնա խարարության խորհրդական Հենրիկ Լիլոյանը եւ «Հայաստան-Ֆրանսիա» ընկերության նախագահ Ռուբեն Սահակյանը: Նրանք խոսեցին Ժանսեմի ու Վերնոյի բարձր արվեստի մասին, որը Ֆրանսիական ու համամարդկային լինելով հանդերձ, միաժամանակ խոր հայկականության կնիք է կրում: ԱՕԿՍ-ի ծեմասրահում բացվել է ցուցահանդես, որ ներկայացնում է Ժանսեմի վիմագրություններն ու ցուցահանդեսների կատալոգները, Վերնոյի ֆիլմերի հայտագրերը, ֆիլմերից դրվագներ դատկերող լուսանկարներ, երկու հայորդիների ստեղծագործություններին նվիրված հոդվածներ: Հանդիդման մասնակիցները որոշեցին շնորհավորագրեր ուղարկել հորելյարներին:

Տ. Լ.

ԱՄԲԻՈՆ

Համաստեղի 100-ամյակը՝ ՈՒԳԸ դյուր

Հոկտեմբերի 31-ին Երեւանի Հրաչյա Աճառյան համալսարանի ռեկտորատի նախաձեռնությամբ Աբովյան մանկավարժական ինստիտուտի մեծ դահլիճում տեղի ունեցավ ուսանողական գիտական նստաշրջան նվիրված հայ ակադեմիկոս արձակագիր Համաստեղի ծննդյան 100-ամյակին: Միջոցառմանը բացման խոսքով հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր, դրոֆեսոր Սուրեն Դանիելյանը, իսկ արձակագրի ստեղծագործական գործունեությանը ծանոթացին համալսարանի բանասիրական ֆակուլտետի 5-դ կուրսի ուսանողներ:

ԼՈՒՍԻԱՆ ՏԵՐ-ՕՍԻՊՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Ժակ Շաբը Երեւանում՝ երկու համերգով

Ֆրանսիացի դաշնակահար Ժակ Շաբը երկու համերգ տվեց Կոմիտաս կոնսերվատորիայի դահլիճում եւ իր երեւան կատարած այցը բացատրեց ոչ միայն Հայաստանի կոմդոզիտորների եւ երաժշտագետների միության հրավերով, այլեւ այն հանգամանքով, որ կնոջ անունը Նվարդ է: Օրագիրը 20-դ դարի կոմդոզիտորների դաշնամուրային դիեսների «էվոլյուցիան» էր բովանդակում՝ ինչ ճանապարհ են անցել դաշնակդիմ մինչեւ այսօր: Դատմելով Հայաստանի հետ ունեցած իր կապերի մասին, դաշնակահարն ասաց, որ սա իր երկրորդ այցելությունն է: Նախորդի ժամանակ հանդես է եկել Ֆրանսահայ անսամբլի հետ, որը ղեկավարել էր կինը՝ Նվարդ Անդրեասյանը: Դաշնակահարն այնուհետեւ խոսեց հայ կոմդոզիտորների (Առամ Խաչատրյան, Սոնա Բաբաջանյան) դաշնամուրային ստեղծագործությունների իր իմացության մասին եւ ավելացրեց, որ առաջիկա համերգներում հնարավոր է, որ կատարի դրանք:

«Երթը» գլխավորում է Ավետ Տերտերյանը

Կոմդոզիտոր Ավետ Տերտերյանի առաջին սիմֆոնիան, որի համերգային կենսագրությունն սկսվել է Հայաստանի կոմդոզիտորների տան բեմահարթակից, նոր սրահում հնչեց 30 տարի անց, այս անգամ՝ Հայաստանի կոմդոզիտորների եւ երաժշտագետների միության նորագույն անսամբլի կատարմամբ (դիրիժոր՝ Դավիթ Հարությունյան): Խոսելով երեք տասնամյակի ընթացքում իր կենսունակությունը դահդանած ստեղծագործության արժանիքների մասին, կոմդոզիտորների եւ երաժշտագետների միության նախագահ Ռոբերտ Ամիրխանյանն ասաց, որ Տերտերյանն իր գեղագիտական սկզբունքներով, ընդհանրացումներով մի ամբողջ դդրոց է ստեղծել: Իսկ ֆրանսիացի դաշնակահար Ժակ Շաբն այն անվանեց հայկական փիլիսոփայությամբ շաղախված եւ իր դարը բնորոշող ստեղծագործություն: Ունկնդիրներին ուրախություն դատճառեց նաեւ կոմդոզիտոր Էդուարդ Հայրապետյանը, որի՝ Բայրոնի խոսքերով վոկալ շարքը նվագախմբի հետ ներկայացրեց մենեգյուհի Մարինե Մկրտչյանը (առաջին կատարում): Ծրագրի մյուս գործը Մարտին Իսրայելյանի նվագախմբի համար կատրիչիոն էր:

Հայ ուսխորհրդի երրորդ տարին նշում են շարունակողները

Երեկ Երեւանի դետական համալսարանում կազմակերդվեց հանդիդում հայ մեջ՝ նվիրված հայ ուսանողական խորհրդի կազմավորման 3-դ տարելիցին: Կազմակերդել էին նախկին հայ ուսխորհրդի հիմի վրա ստեղծված 3 կառույցները՝ ԵՐԱԿ, ԵՐԹ եւ «Արդարություն» երիտասարդական կազմակերդությունները: Հանդիդմանը մասնակցում էր հեղինակային երգի կատարող Վահրամ Թաթիկյանը: Նա մասնակիցներին նվիրեց իր երգերի գիրքը եւ հայտնեց, որ նոյեմբերի 14-ին տեղի կունենա իր մենահամերգը:

ԳԱՅԱՆԵ ԱՆՏՈՒՆԻ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ոսկան Երեւանցի» տպագրատունը (նախկին թիվ 3 տպարան) ընդունում է բոլոր տեսակի տպագրական դատվերներ՝ գրքեր եւ բրոշյուրներ ցանկացած կատարմամբ, օրացույցներ, հաշվադահական եւ այլ բլանկներ, դիտակներ (տիկետներ), բուկլետներ, այցեդոմսեր եւ այլն:

Տպագրատանը կիրառվում են օֆսետ եւ բարձր տպագրության եղանակները, աղահովվում է բազմագույն եւ սեւ-սպիտակ տպագրության եւ կազմարարական աշխատանքների բարձր որակ:

Դատվիրատուների ցանկությամբ կատարվում է նաեւ գրքերի, բուկլետների, դիտակների, օրացույցների բարձրորակ նկարչական ձեւավորումներ:

Դատվերները կատարվում են սեղմ ժամկետներում, կախված ծավալներից եւ քանակներից, որոնք ձեւակերդվում են երկկողմ կնքված դայմանագրերում:

Տպագրատան հասցեն՝
Երեւան, Հանրադետության հրադարակ
Մելիք-Ադամյան փ. 1
Հեր. 52-13-95, 52-78-63

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

Նորայր Մուշեղյանը 60 տարեկան

Այսօր լրանում է ՀՀ գիտության և կրթության նախարարության ընբռնմարտի օլիմպիական հերթափոխի մարզադրոցի տնօրեն, սպորտի վաստակավոր վարպետ, վաստակավոր մարզիչ Նորայր Մուշեղյանի ծննդյան 60 ամյակը:

«Կան անուններ, որոնք չեն ծերանում և երբեք չեն կորցնում իրենց նշանակությունը. քանի որ գրանցվում են դպրոցության այն էջերի վրա, որոնք հավերժ դպրոցվում են ազգային գանձարանում: Այդ անուններից մեկը Նորայր Մուշեղյանն է: Կազմակերպչական հզոր ուժով օժտված այդ մարդն իր աստվածատուր բնավորության շնորհիվ կարողանում է շարքը համախմբել բոլորին», հոբելյանի նախօրեին Ն. Մուշեղյանի մասին այսպես արտահայտվեց նրա մտերիմ ընկերներից ՀՀ գեղագիտական կենտրոնի տնօրեն Հենրիկ Թոքմաջյանը: Իսկ առաջին հայ օլիմպիական չեմպիոն Շահինյանն ասաց. «Մուշեղյանը հիանալի ֆիզիկական տվյալների և ճկուն ուղեղի տեր անձնավորություն է: Ի դեպ, շատ քիչ մարզիկների է հաջողվում համատեղել միտքը և ուժը: Երիտասարդական այն նետնը, որ Ն. Մուշեղյանն ուներ սպորտում, այսօր նույնությամբ ներդրել է մանկավարժական գործում: Ես ամեն անգամ հիանում եմ, տեսնելով, թե նա ինչպիսի ընդգծված ձևով է տանում իր մարզադրոցի սանների հայրենասիրական դաստիարակությունը»:

Ընբռնմարտով սկսել է զբաղվել 1952 թվին և մեկ տարի անց դարձել է ԽՍՀՄ դպրոցականների չեմպիոն: 1954 թվին դպրոցն հայ մարզիկը տեղ է գրավել մեծահասակների հավաքականում: Անցկացրել է 410 գոտեմարտ, որից 400-ը շահել է, 6-ն ավարտել ոչ-ոքի, կրելով ընդամենը 4 դարտություն: Նա աշխարհի գավաթակիր չեմպիոն է, աշխարհի առաջնության բազմակի մրցանակակիր, ԽՍՀՄ չեմպիոն, մրցանակակիր:



Մարզական հարուստ գործունեություն է ծավալել ԽՍՀՄ հավաքականում, Մեքսիկայում, Արգենտինայում, Աֆղանստանում և նշված բոլոր երկրներում էլ արժանացել է կառավարական բարձր դրգռումների:

Լինելով «Զորավար Անդրանիկ» մշակության նախագահ, Ն. Մուշեղյանը ծավալել է բարեգործական գործունեություն մեր Արցախում, մեր աղեխ գոտում, մեր Բուլղարիայում: Չնայած Բուլղարիայում Թուրքիայի և Ռուսաստանի դեսպանատների բողոքներին, Ն. Մուշեղյանին հաջողվել է 1986 թվին Բուլղարիայում զորավար Անդրանիկի արդած տան դիմաց տեղադրել հուշատախտակ, իսկ ավելի ուշ Անդրանիկի անունով անվանակոչել փողոցը: Մուշեղյանը հսկայական աշխատանք է տարել նաև Բուլղարիայում հայկական դպրոցներ բացելու ուղղությամբ և բացվելուց հետո էլ հայկական գաղթօջախի մանուկների համար հազարավոր հայկական դասագրքեր և գեղարվեստական գրքեր է ուղարկել:

Արդեն 8 տարի է, ինչ Ն. Մուշեղյանն իրեն նվիրել է արցախյան դպրոցներին և իր իսկ խոստովանությամբ այն այսօր կյանքի հիմնական մասն է: Մարզադրոցում կազմակերպել է բազմաթիվ հուշամրցաշարեր զորավար Անդրանիկի, մարշալ Բաղրամյանի, Թաքոլ Կարեյանի հիշատակներին:

Այսօր էլ Ն. Մուշեղյանը կրծին մարզական փառքի դափնիներ և ուսերին 60 տարվա կյանքի հարուստ փորձը, երիտասարդ մարզիկներին խորհուրդ է տալիս դպրոցել և միշտ հիշել, որ իրենց հաջողություններին սպասում է ժողովուրդը:

ԿԱՐԻՆԵ ՊԱՊԻԿՅԱՆ
ՆՈՅՅԱՆ ՏՍՊԱՆ

ՇԱԽՄԱՏ

Կասպարովը մխիթարվելու առիթ ունի

Շվեյցարիայում շարունակվում է Պրոֆեսիոնալ շախմատիստների ասոցիացիայի ծրագրով անցկացվող հերթական երրորդ մրցաշարը, որում անհաջող է հանդես գալիս ՊՇԱ-ի վարկածով աշխարհի չեմպիոն Գարրի Կասպարովը: Նա 9 հանդիպումներում հասել է իր համար անսովոր 50 տոկոսանոց արդյունքի և զբաղեցնում է 5-րդ տեղը: Սակայն Կասպարովը մխիթարվելու առիթ ունի, քանի որ նախորդ երկու մրցաշարերում, որոնք տեղի ունեցան Ռիգայում և Թիլբուրգում, հաղթել է և ընդհանուր հաշվարկով վստահորեն ընթանում է առաջին տեղում: Կասպարովը 9-րդ տուրում ոչ-ոքի խաղաց մոսկվացի տաղանդավոր գրոսմայստեր Կրամնիկի հետ: Լվովցի գրոսմայստեր Վասիլի Իվանչուկը հաղթելով այժմ Գերմանիայում աղորող Արթուր Յուսուպովին, կրկին դարձավ միանձնյա առաջատար: Իվանչուկը 8 հնարավորից վաստակել է 6 միավոր: Նրան կես միավորով է զիջում Կրամնիկը, որը նույնպես անցկացրել է 8 հանդիպում: 4,5 ական միավոր են վաստակել տալլինցի գրոսմայստեր Յան Էլվեսը և անգլիացի Նայջել Շորթը: 9-րդ տուրում Էլվեսը ոչ-ոքի խաղաց երեւանցի գրոսմայստեր Ռաֆայել Վահանյանի հետ:

ՈՒԵՖԱ-Ի ԳԱՎԱԹ

«Ռոտորի» սպասելիքները չարդարացան

ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության 1/16 եզրափակիչի առաջին խաղում, Ֆրանսիայում Վոլգոգրադի «Ռոտոր» 1-2 հաշվով զիջել էր «Բորդո» թիմին և դպրասխան խաղում մեծ հույսեր էր փայփայում հաջող փոխ դուրս գալու, առավել ևս, որ «Բորդոն» հաջող չի խաղում Ֆրանսիայի առաջնությունում: Սակայն Վոլգոգրադում տեղի ունեցած հանդիպումն էլ ավարտվեց «Բորդոյի» հաղթանակով 1-0 հաշվով: Մինսկի «Դինամոն», չնայած սեփական հարկի տակ 2-1 հաշվով առավելության հասավ Գերմանիայի «Վերդեր» թիմի նկատմամբ, սակայն նույնպես դեռ է հրաժեշտ տալ մրցաշարին, քանի որ առաջին խաղում զիջել էր 0-5 հաշվով: Նույն բախտին արժանացավ նաև Քիշնևի «Զիմբրուլը», որը հարազատ հարկի տակ 0-2 հաշվով զիջեց Պրահայի «Սպարտային»: Հաջող փոխ է դուրս եկել նաև Պրահայի մյուս թիմը «Սլավիան», որը 1-0 հաշվով հաղթեց Շվեյցարիայի թիմին: 1/8 եզրափակիչ են դուրս եկել նաև «Բավարիան», որը 2-դ անգամ առավելության հասավ Շոտլանդիայի «Ռանգերսի» նկատմամբ և Պորտուգալիայի «Բենֆիկան», որի նկատմամբ սեփական հարկի տակ չկարողացավ ոչ ոքի վերցնել Հոլանդիայի «Ռոդան»:

ԽԾԱՆԿԱՐ

Չեմպիոնի հիանալի խաղը

16 ամյա դպրոցական Արթուր Շիրուխյանը, որը վերջերս Թբիլիսիից տեղափոխվել է Երեւան, դարձավ Երեւանի դպրասնի շախմատիստների չեմպիոն: Նա բացարձակ բարձր արդյունք ցույց տվեց, 9 հանդիպումներում վաստակելով 8 միավոր եւ ոչ մի դարտություն չկրելով: Նրանից կես միավորով ետ մնաց Դմիտրի Հարությունյանը: 12 ամյա Վարուժան Հակոբյանը 6,5 միավորով դարձավ 2-րդ մրցանակակիր: Վերոհիշյալ եռյակին հանձնվեցին դրամական մրցանակներ:
ՄԱՍԻՍ

Ո՞վ կտանի օլիմպիական կրակը

Ամերիկյան մարզական մամուլը հաղորդում է, որ 1996-ի օլիմպիադայի մայրաքաղաք Ատլանտայում սկսվել է այդ խոշորագույն մարզական միջոցառման կազմակերպման հետ կապված մրցույթ: Հատուկ կոմիտեն բազմահազար բեկնածուներից ավանից Ամերիկա կհասցնեն օլիմպիական կրակը: Նրանցից յուրաքանչյուրն անցնելու է առնվազն մեկ կիլոմետր ճանապարհ: Ըստ որում հավակնորդների մի մասին ներկայացնելու են Ատլանտայի քաղաքացիների համայնքները, մնացածներին՝ այլ կազմակերպություններ, որոնց հետ կկատարեն վերջնական ընտրությունը: Այս մրցույթը մեծ աշխուժություն է առաջացրել, ինչը վկայում է օլիմպիադայի հանդեպ Ատլանտայի բնակչության արտակարգ հետաքրքրության մասին:
ՍՐՍԵՆՊՐԵՍ

Առանց Կարոլի եւ Կամսկու

ՖԻՖԵ-ի վարկածով աշխարհի չեմպիոն Անատոլի Կարպովը եւ այդ կոչման հավակնորդ Գասա Կամսկին պատշաճորեն մերժեցին 1996-ի փետրվար-մարտ ամիսներին մասնակցել Լինարեսի ավանդական ամենահեղինակավոր մրցաշարին: Իսպանական մամուլի համաձայն, երկուսն էլ իրենց որոշումը բացատրել են ՊՇԱ-ի վարկածով աշխարհի չեմպիոն Գարրի Կասպարովի «շախմատին պատիվ չբերող գործունեությամբ»: Հայտնի է, որ Կասպարովը եւս մասնակցելու է այս մրցաշարին, ուստի Կարպովն ու Կամսկին անընդունելի են համարել իրենց մասնակցությունը:
ՍՐՍԵՆՊՐԵՍ

FREE!
BIBLE STUDY COURSE
available in English or Russian. Study the Bible for yourself without the need to attend a church or listen to priests. Christ will soon return and begin His Kingdom here on earth; if we understand the true Gospel and are baptized by complete dipping in water, we can look forward to eternal life in this Kingdom, and also have joy and peace now. Write:
Christadelphians, PO Box 1903 Vilnius 2012 LITHUANIA
or PO Box 544 London SE27 OUL ENGLAND

БЕСПЛАТНЫЙ!
Учебный курс Библии
Изучайте Библию на Английском или Русском языке самостоятельно без потребности посещения церкви или слушания духовника. Христос скоро вернется и начнет свое Королевство здесь на земле; если мы понимаем настоящую Библию и крещены полным погружением в воду, мы можем надеяться на вечную жизнь в этом Королевстве, а также иметь радость и мир теперь, имея наше собственное отношение с Богом.
Пишите: Христаделфианание, А/Я 1903 Вильнюс 2012 ЛИТВА
или Christadelphians, PO Box 544 London SE27 OUL ENGLAND

ԾԱԿԱՏԱԳԻՐ

Համալայնենի ընտանիքը անիվների վրա

ԳԵՎՈՐԳ ԱՍԼԱՆՅԱՆ
Վալանս, Ֆրանսիա

Այս դարակագրում Ֆինլանդիան կազմում: 1917 թ. օգտվելով Հոկտեմբերյան հեղափոխությունից, Ֆինլանդիան հռչակեց իր անկախությունը: Ֆինական ծագումով տասնամարտի Ռուսաստանի հավաքականի անդամ Էդվարդ Համալայնենի դարը եւ տարը հեղափոխության օրերին հասատվեցին Սանկտ Պետերբուրգում, որը շուտով Լենինգրադ անունը ստացավ: Մինչեւ 1936-ը նրանք ապրում էին Լենինգրադում: Խորհրդային Միությունը Ֆինլանդիայի մեծ «հսկիչ» ընկեր հարեւանն էր, որը ռազմական բնագավառում օգնության բազմաթիվ դայմանագրեր էր ստորագրել: Բայց 1936 թվին Ստալինի Սկանդինավյան եւ Բալթյան երկրների ծագում ունեցող քաղաքացիներին կասկածում էր հակասովետական տրամադրություններ ունենալու մեջ եւ նրանցից շատերին ուղարկեց Սիբիր: Համալայնենի ընտանիքը ստիպված լինեց Լենինգրադը եւ մի շոգեկառքով երկար ճանապարհ կտրելով հասավ Ղազախստան, հաստատվելով Կարագանդա հանքագործների քաղաքում: 12 տարի անց (1948 թվին) ԿԳԲ-ն այս գաղթականներին հայտարարեց, որ նրանց Կարագանդայում մնալն անցանկալի է: Համալայնենի ընտանիքը ստիպված [illegible] վում է Ուֆա: [illegible] 1969 թ. հունվարի [illegible] ին ծնվում է Էդվարդ Համալայնենը: Ունենալով բնատուր ստեղծագործական տվյալներ, Էդվարդը սկզբում լավ ֆուտբոլ էր խաղում, հետո վոլեյբոլ: Հայրը Պավելը, նկատելով տղայի մեծ շնորհը, որոշում է Էդվարդին տեղափոխել տասնամարտի ասպարեզ: Նախկինում ինքը Պավել Համալայնենը տասնամարտիկ էր, իսկ հետո դարձավ մարզիչ: 1987 թվին Կանադայում տեղի ունեցած աշխարհի երիտասարդական առաջնությունում Էդվարդը տասնամարտում դառնում է բronզե մեդալակիր, վաստակելով 7596 միավոր: Դրանից հետո նա զինակոչվում է բանակ եւ Մոսկվայում իրեն ամբողջովին նվիրում տասնամարտին՝ մարզվելով իր հոր ծրագրով: 1991 թվին Էդվարդը կարողանում է իր անձնական ռեկորդը բարելավել 400 միավորով եւ հասցնել 8223 միավորի: Մինչ այդ Համալայնենի ընտանիքը [illegible] սեկ անգամ եւս արտաքսվել էր եւ հաստատվել 200 [illegible] հազար բնակչություն ունեցող Գրոդնո քաղաքում, որը գտնվում է Լեհաստանի սահմանում: «Ես 12 տարեկան էի: Հայրս, որ բռնցքամարտի մարզիչ էր դարձել, զբաղվել էր Ուրալի, եւ մասնավորապես, Ուֆա քաղաքի ծանր կյանքից: Մայրս հիվանդ էր: Հայրս Գրոդնոյից հրավեր ստացավ եւ մենք ընտանիքով տեղափոխվեցինք Բելառուսիա», վերհիշում է Էդվարդը: 1992 թվին 23-ամյա Համալայնենը մեծ հույսերով մեկնեց մասնակցելու Բարսելոնի օլիմպիական խաղերին, բայց տասնամարտում անհաջողության մատնվելով, չկարողացավ մեդալակիր դառնալ: Իր հերթին Դալաս քաղաքում Դեն Օ'Բրայանը տասնամարտի աշխարհի նոր ռեկորդ է սահմանում: Հուսախաբված Համալայնենը որոշում է մամուլ կյանք վարել եւ ամեն ինչ նվաստացուցիչ դարձնել տասնամարտին: Հետեւելով իր հոր խորհուրդներին, նա հրաժարվում է ալկոհոլից եւ դիսկոտեկների գիշերային կյանքից: Հաջողություններ երկար սպասել չեն տալիս: 1993 թվին նա հաղթում է Ավստրիայում տեղի ունեցած մրցաշարում, վաստակելով 8604 միավոր, որը միաժամանակ անձնական ռեկորդ էր: 1994 թ. Շտուտգարտում տեղի ունեցած աշխարհի առաջնությունում նա արդեն դառնում է աշխարհի փոխչեմպիոն, զիջելով միայն հանրահայտ Օ'Բրայանին: Դրանից հետո Ֆինն նախնիներ ունեցող բելառուսցին որոշում է վերջնականապես առաջին տեղը գրավել միջազգային տասնամարտի մրցաստարեզում: [illegible] տեղի ունեցած [illegible] առաջնությունում Էդվարդ Համալայնենին ֆինլանդացիներ ծափահարեցին որպես իրենց հայրենակցի, չնայած որ նա ասպարեզ էր դուրս եկել Բելառուսի դրոշի ներքո: Բայց, ցավոք, իր նախնիների հայրենիքում նա հաջողություն չունեցավ: Առաջին իսկ օրը 110 մ արգելավազքում անհաջողության մատնվելով, Էդվարդ Համալայնենը բողոց մրցաստարեզը: Միեւնույն է, Էդվարդը համառորեն ձգտում է տասնամարտում մի օր առաջինը լինել: Թող դա լինի 1996 թվին, Ատլանտայում:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՕՐՎԱ ԽԵՏՔԵՐՈՎ

ԹԲԻԼԻՍԻ

Նախընտրական սկանդալները Վրաստանին էլ խորթ չեն

Վրաստանում ընտրությունների նախօրեին հերթական սկանդալային իրավիճակն է ստեղծվել: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը վարչատեսակ Օբար Պացացիային եւ փոխվարչատեսներ Թամազ Նադարեիշվիլիին եւ Ավթանդիլ Մարգիանիին օրենքի կողմից խախտման համար զրկել էր ընտրություններին մասնակցելու իրավունքից: Բանն այն է, որ գործող օրենադրության համաձայն վարչատեսին, փոխվարչատեսներին, ինչպես նաեւ նախարարներին արգելվում է մասնակցել ընտրություններին: Այսինքն, նրանք իրավունք չունեն առաջադրել իրենց թեկնածությունները միաժամանակ մնալով իրենց պաշտոններին: Այս դրույթը ընդհմության դահլիճում ընդունված է նոր սահմանադրության մեջ, որպեսզի նախընտրական դաշտում Էդուարդ Շեւարդնաձեն չկարողանա օգտագործել գործադիր իշխանության լծակները:

Միեւնույն ժամանակ, քաղ նոր սահմանադրության, վարչատեսի պաշտոնը վերացված է: Պետության ղեկավարը հանդես է գալու նաեւ որպես գործադիր իշխանության ղեկավար: Սակայն առաջիկա կառավարությունում Օբար Պացացիայի լինելու հավանականությունը հավասար է զրոյի, քանի որ ընտրություններից հետո Էդուարդ Շեւարդնաձեն, եթե դառնա նախագահ, իր թիմը կհավաքի իր իսկ «Վրաստանի քաղաքացիների միություն» կուսակցության անդամներից:

Իսկ 1993 թ. սեպտեմբերին Օբար Պացացիային վարչատեսի պաշտոնին նշանակելը կարված է եղել այն հանգամանքի հետ, որ նա մեծ հեղինակություն էր վայելում Զուգդիդիի շրջանում, որտեղ այն ժամանակ քաղաքացիական պատերազմ էր տեղի ունենում Էդուարդ Շեւարդնաձեի եւ Վրաստանի նախկին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի կողմնակիցների միջեւ: Այսօր այդ խնդիրը լուծված է, եւ Պացացիան հասկանում է, որ ընտրություններից հետո իրեն այլեւս Շեւարդնաձեին պետք չի լինի: Այդ պատճառով նա էլ էր որոշել հրաժարական տալ, որպեսզի հնարավորություն ստանա առաջադրել իր թեկնածությունը Զուգդիդիի շրջանում:



Պացացիայի հրաժարականը իրարկե համաձայնեցված է եղել Էդուարդ Շեւարդնաձեի հետ, որը սակայն նախընտրական բոռ ու բոռի մեջ հնարավորություն չունենալով ամեն ինչին իրենոնրույն հետեւել, խնդրել էր վարչատեսին, որ նա, այնուամենայնիվ, որոշ հարցերում իր մասնակցությունը ունենա: Վարչատեսը եւ փոխվարչատեսները նորից սկսեցին հայտնվել իրենց առանձնասենյակներում: Ընդդիմության ներկայացուցիչները, որոնք կենտրոնական ընտրական հանձնաժողովում մեծամասնություն են կազմում, իմանալով այդ մասին, զրկել էին վարչատես Պացացիային եւ փոխվարչատեսներ Նադարեիշվիլուն եւ Մարգիանիին առաջադրելու իրավունքից: Եթե Շեւարդնաձեն այժմ անտարբեր է Պացացիայի եւ Մարգիանիի բախտի նկատմամբ, ապա նույնը չի կարելի ասել Թամազ Նադարեիշվիլու համար, քանի որ նա, լինելով Աբխազիայի վրացական համայնքի ղեկավար, ներկայացնում է Աբխազիայի հարյուր հազարավոր փախստականների շահերը:

Բարեբախտաբար, ի տարբերություն կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Վրաստանի Գերագույն դատարանում Շեւարդնաձեի կուսակցական եւ կոմերցիոնական նախկին գործընկիցներ մեծամասնություն են կազմում: Գերագույն դատարանը չեղյալ է հայտարարել կենտրոնական հանձնաժողովի որոշումը եւ վերականգնել է ընտրություններին մասնակցելու Օ. Պացացիայի, Թ. Նադարեիշվիլու եւ Ա. Մարգիանիի իրավունքը:

ԳՐԻԳՈՐ ԷՄԻԼ-ՏԵՐՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆ

Ալիեւին իր նախկին խորհրդականը մեղադրում է ժողովրդավարությունից հրաժարվելու մեջ

Ինչպես հաղորդում է Ֆրանսդրես գործակալությունը, «Ազգային ոչտատանությունը» կուսակցության ղեկավար Նեյմար Փանահիին հոկտեմբերի 27-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ լրագրողներին է հանձնել մի ցուցակ, որ, ըստ նրա, առաջիկա խորհրդարանական ընտրություններում կանխորոշված հաղթողների անուններն են: Համաձայն «Ազատություն» ռադիոկայանի հաղորդման, Փանահիին մինչեւ հոկտեմբերի 14-ը զբաղեցնում էր վարչատարածքային հարցերով Ադրբեջանի նախագահի խորհրդականի պաշտոնը: Տարիներ շարունակ նա հայտնի է եղել իբրեւ Հեյդար Ալիեւի հավատարիմ աջակից: Սակայն հոկտեմբերի 27-ի ասուլիսում նա հայտարարել է, թե իշխանության վերին օղակներում ստեղծված կաբառակերությունը հիասթափեցրել է իրեն: Երբ Էլչիբեյի օրոք կաբառների չափերը հաշվվում էին միլիոններով, ապա այսօր դրանք հասել են միլիարդների, ասել է Փանահիին:

«Նախագահ Ալիեւը ինձ ասաց, թե աշխարհի ոչ մի երկրում ժողովուրդը խորհրդարան չի ընտրում, որ աշխատում ոչ մի տեղ ժողովրդավարական ընտրություններ չեն լինում», հայտնել է նա եւ ավելացրել, թե ինքը տեղեկացել է, որ առաջիկա ընտրությունների արդյունքները կեղծվելու են, իսկ իրեն երաշխավորված տեղ է առաջարկվել նոր խորհրդարանում:

Սակայն ընտրություններին հետեւող ԵԱՀԿ դիտորդների խմբի խոսնակը հայտարարել է, թե իրենց կազմակերպությունը նման ցուցակ չի ստացել, եւ զգուշացրել է, թե չի կարելի հաղթանակ գույի գծերը սկսել են բարձրանալ (հայտնի է, որ վաղուց ի վեր Ադրբեջանի կառավարությունը անհանգստանում էր Կարսից եւ նույնանուն նահանգից բնակչության արտագաղթի առթիվ): «Կարսի անգործության հարցը շուտով կլուծվի, Կարսը կդառնա դեղի կովկաս եւ Միջին Արեւելք կարեւոր դուռ», ասել է Դեմիրելը: Նախագահը նշել է նաեւ, որ «Հայաստանն ու Ադրբեջանը սկսել են մերձենալ»: «Մենք Ադրբեջանի բոլոր շահերը դիտարկում ենք որպես մեր շահերը, եթե Ադրբեջանի մարմինը ասեղ մտցնեն, մեր մարմինը մախաթ մտած լինելու դեպք է դառնում»:

ԱՐՄԵՆ ԱՍԼԻԲԵԿՅԱՆ
ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ

Դեմիրել. «Երբ Ադրբեջանի մարմինը ասեղ են մտցնում, կարծես մեր մարմինը մախաթ մտցրած լինեն»

Մամուլի թուրքական միջոցները հաղորդում են, որ «Կարսի ազատագրումի 75-րդ տարեդարձի առթիվ հանդիսություններին ներկա գտնվելու նպատակով» Սուլեյման Դեմիրելը ժամանել է Կարս եւ հանդիպել Կարսի, Իգդիրի ու Երզրումի կուսակալների հետ: Վերջիններս խոսել են Կարսի ու սահմանամերձ շրջանների սահմանային դռները բացելու անհրաժեշտության մասին: Նախագահն անդրադարձել է հայ-ադրբեջանական հակամարտության հարցին եւ հայտարարել, որ «Թուրքիան երբեք թույլ չի տա, որ դարաբաղյան հարցում Ադրբեջանի դեմ որեւէ անարդարություն գործադրվի»: Դեմիրելը չի թաքցրել իր ուրախությունը, երբ տեղեկացել է, որ Կարսում անշարժ գույքի գները սկսել են բարձրանալ (հայտնի է, որ վաղուց ի վեր Թուրքիայի կառավարությունը անհանգստանում էր Կարսից եւ նույնանուն նահանգից բնակչության արտագաղթի առթիվ): «Կարսի անգործության հարցը շուտով կլուծվի, Կարսը կդառնա դեղի կովկաս եւ Միջին Արեւելք կարեւոր դուռ», ասել է Դեմիրելը: Նախագահը նշել է նաեւ, որ «Հայաստանն ու Ադրբեջանը սկսել են մերձենալ»: «Մենք Ադրբեջանի բոլոր շահերը դիտարկում ենք որպես մեր շահերը, եթե Ադրբեջանի մարմինը ասեղ մտցնեն, մեր մարմինը մախաթ մտած լինելու դեպք է դառնում»:

ԱՐՄԵՆ ԱՍԼԻԲԵԿՅԱՆ
ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

Վրաստանը բնական գազ կստանա Ռուսաստանից

Վրաստանը գազ կներմուծի Ռուսաստանից իր էներգահամակարգի կարիքները հոգալու համար: Ռուսաստանը 400 մլն խմ գազ կառաքի Վրաստան, փոխարենը ստանալով մանգան, խողովակներ, թեյ, գինի եւ այլ գյուղատնտեսական մթերքներ: Վրաստանի կառավարության աղբյուրները տեղեկացրել են, որ Ռուսաստանի բնական գազի արժեքը, ներառյալ նաեւ մինչեւ սահման դրա առաքումը, կկազմի մոտ 70 ԱՄՆ դոլար 1.000 խմ-ի համար, որը 10 ԱՄՆ դոլարով պակաս է այն գնից, որ Վրաստանը վճարում էր թուրքմենական գազի դիմաց: Վրաստանը դադարել է Թուրքմենստանից գազ գնել, քանի որ Վրաստանի պարտքը այդ երկրին հասել է 450 մլն դոլարի:

ԼՏ

Ահաբեկչությունից զոհվեց Պաղեստինի իսլամական շարժման առաջնորդը

Սալբա թերակղզում, հոկտեմբերի 25-ին ահաբեկչության զոհ դարձավ Պաղեստինի իսլամական շարժման առաջնորդ, մասնագիտությամբ բժիշկ, 44 ամյա Ֆաթրի Շահաղին, որը մեկնել էր Լիբիա, տեղի ղեկավարության հետ պաղեստինցիների տեղահանության հարցերը լուծելու: Իրանի ռադիոյի համաձայն, Շահաղին իսլամի մոլեռանդ հետեւորդներից ու ջատագովներից էր: Նա երկար տարիներ մարտնչում էր Պաղեստինի ազատագրման համար, որի պատճառով մի քանի անգամ բանտարկվել էր եւ համարվում էր սիոնիստական վարչակարգի ոխերիմ բշնամիներից: Իրանը եւ մյուս իսլամական երկրները Շահաղիի սպանության մեջ մեղադրում են Իսրայելի հատուկ ծառայություններին: Հոկտեմբերի 31-ին Պաղեստինի իսլամական շարժման առաջնորդի դին մեծ շուքով տեղափոխվեց Դամասկոս: Հուղարկավորության օրը՝ նոյեմբերի 1-ը բոլոր մահմեդական երկրներում սգո օր էր հայտարարված:

Իրանը հատուկ մարդասպան չի ուղարկի Ռուշդիի հետեւից

ԹԵՀՐԱՆ, 1 ՆՈՅԵՄԲԵՐ, [illegible]. Իրանի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկն ասել է, որ Սալման Ռուշդիի նկատմամբ [illegible] դատավճիռն իրականացնելու համար Իրանը մարդասպաններ չի ուղարկի: Միաժամանակ նշվել է, որ Իրանը գրավոր կերպով երբեք չի հրաժարվի կայացրած որոշումից, քանի որ դա կվնասի երկրի արժանապատվությանը:

«Աում-Սինրիկյոն» արտադրել էր LSD-ի 4 միլիոն չափաբաժին

Ճապոնական «Աում սինրիկյո» աղանդի նախկին ղեկավարները ոստիկանությանը խոստովանել են, որ աղանդի լաբորատորիաներում արտադրվել է գնորահարույց LSD թմրադեղի 4 միլիոն չափաբաժին: Ծրագրված է եղել ուժեղ ներ գործող այդ թմրանյութը փոխարինել Տոկիոյի վրա՝ ռեսական հեղաշրջումը հաջողությամբ իրականացնելու նպատակով: Միաժամանակ հաղորդվում է, որ տարբեր առիթներով աղանդի անդամներին տրվել է LSD-ի 3000-6000 չափաբաժին, առանց հայտնելու դրա բնույթի մասին: Ուսի աղանդավորներն իրենց ու նեցած զգայաոտարանները վերագրել են Սյոկո Ասահարայի գորությանը:

L'Express

ՊԱՐԱՊՈՒՄ ԵՄ

Հայոց լեզու եւ գրականություն դպրոցականների հետ: Հեռ.՝ 648885

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատանն անհրաժեշտ է երկու եւ ավելի սենյականոց 8-12 բնակարան ունեցող շենք վարձակալման կամ գնման համար:

Զանգահարել 28-04-57, 52-98-30

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սլավիչ ամ կողմից կազմակերպված առեւտրի տունը հայտարարում է լուսանկարչական թղթերի եւ նյութերի վաճառք: Յանկացողները դիմեն Երեւանի Ֆոտոկոմբինատ:

Հասցեն՝ Երեւան, Պարոնյան 8, հեռ. 538577, 538578:

ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Մեսրոպ Մաշտոցի պողոտայում գտնվող («Նաիրի» կինոթատրոնի մոտ) 4 հարկանի բարե շինարի 1-ին հարկում գտնվող 71 քմ ընդհանուր մակերեսով, 43.4 քմ բնակելի մակերեսով բնակարան:

Հնարավոր է բաղել խանութ կամ օֆիս:

Գինը պայմանագրային:

Հասցեն՝ Մաշտոցի 39/12 բնակ, բն. 49

Հեռ. 56-12-43

«ԱԲԱԲԱՏ» ավիաուղիներ

Պետական դուստր ձեռնարկությունը ՅԱԿ-40 ինքնաթիռներով կատարում է ուղեւորների եւ բեռների փոխադրում՝ բեռների փոխադրումը մաքսելի գներով: Հարմար մարդկանց համար կան բիզնես կարգի աթոռով կահավորված ինքնաթիռներ:

ԵՐԵՎԱՆ-ՍՏԱՎՐՈՊՈԼ
ԵՐԵՎԱՆ-ՆԱԼՉԻԿ-ՄԱՅԿՈՊ
ԵՐԵՎԱՆ-ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ
ԵՐԵՎԱՆ-ՎՈԼԳՈԳՐԱԴ
ԵՐԵՎԱՆ-ՍՈՉԻ
ԵՐԵՎԱՆ-ՄԻՆՎՈԴԻ

Հանրապետության տարածքում ՄԻ-8 ուղղաթիռներով առաջարկվում են հետեւյալ ծառայությունները՝

- ուղեւորների եւ բեռների տեղափոխում
- օգնության բժշկական աղասարկում
- գազատ[illegible]գիծի, բարձր լարման եւ կապի գծերի, գետերի, ջրանցքների եւ ավտոճանապարհների ուսումնական հսկողություն
- Լիսկուրսիաների կազմակերպ[illegible]ման աշխատանքներ:

Թռիչքները կատարվում են «Երեբունի» օդանավակայանից. Տեղեկությունների համար զանգահարել 48-03-51, 46-47-61

ԵՐԵՎԱՆ ՄԻՆՎՈԴԻ բոլոր չվերները «Զվարթնոց» օդանավակայանից տեղափոխվել են «Երեբունի» օդանավակայան:

Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ձեռնարկությունների *առաքարկի* եւ *պահանջարկի* մասին հեռախոսով: Զանգահարել 589167, 581351 «Սփյուռք»:

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան 23, Արգավանդեցոց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1966. Տիրաժ՝ 7000. Ստորագրված է տպագրության՝ 1.11.1995. Գինը՝ 50 դրամ

digitised by A.R.A.R.@